

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

### Հ Ր Ա Մ Ա Ն

4 մարտի 1999 թ.

N 01/13

#### «ՈՉ ՌԵՁԻԴԵՆՏՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԽԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71 հոդվածի և նպատակ ունենալով պարզաբանել օրենքի դրույթները՝ կապված Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման հարցերի հետ՝

#### Հրամայում եմ

Հաստատել «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը:

ՀՀ հարկային տեսչության պետ՝

Ա. Այվազյան

Հաստատված է  
ՀՀ հարկային տեսչության  
4 մարտի 1999 թ.  
N 01/13 հրամանով

Համաձայնեցված է  
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի  
նախարարություն  
մարտի 1999 թ.

### Հ Ր Ա Հ Ա Ն Գ

#### ՈՉ ՌԵՁԻԴԵՆՏՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԽԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն հրահանգը մշակված է ի կատարումն «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71 հոդվածի և նպատակ ունի պարզաբանել «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները՝ կապված ոչ ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերի հետ:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների (այսուհետ՝ ռեզիդենտ) կողմից շահութահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերը կարգավորվում են առանձին հրահանգով:

#### 1. ՇԱՀՈՒԹԱԽԱՐԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՇԱՀՈՒԹԱԽԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՇԱՀՈՒԹԱԽԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕՐՅԵԿՏԸ

1.1. Շահութահարկը սույն հրահանգի 1.2 կետում նշված հարկատուների կողմից «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկն է:

1.2. Շահութահարկ վճարող են հանդիսանում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ):  
(1.2 կետը խմբ. 10.05.01 N 02/605)

1.3. Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից (սույն հրահանգի 2.1 կետ) ստացվող հարկվող շահույթը:

1.4. Հարկվող շահույթը ոչ ռեզիդենտի համախառն եկամտի (հաշվետու տարում ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացվող բոլոր եկամուտների հանրագումար) և սույն հրահանգով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

1.5. Ոչ ռեզիդենտների հայաստանյան աղբյուրներից ստացված հարկվող շահույթը, շահութահարկի դրույթաչափերը, արտոնությունները, հաշվարկման կարգը և վճարման ժամկետները, ինչպես նաև պատասխանատվությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.6. Հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտականությունները հաշվի են առնվում սկզբնական (ծեռքբերման) արժեքով, բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացված վերազնահատման արդյունքների:

(1.6 կետը լրաց. 10.05.01 N 02/605)

1.7. Հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում միայն սույն օրենքով սահմանված պահուստների (պահուստաֆոնդերի) ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները ու նվազեցումները:

(1.7 կետը լրաց. 10.05.01 N 02/605)

## 2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

2.1. Սույն հրահանգի իմաստով՝ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում.

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները (սույն հրահանգի 2.2 կետ).

բ) ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները (սույն հրահանգի 2.3 կետ).

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտները (սույն հրահանգի 2.4 կետ):

Հայաստանի Հանրապետության տարածքը աշխարհագրական իմաստով նշանակում է Հայաստանի Հանրապետության տարածքը Հայաստանի Հանրապետության պետական սահմաններում, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ տարածվում է Հայաստանի Հանրապետության իրավասությունը, ինքնիշխան իրավունքները և հարկային օրենսդրությունը՝ միջազգային իրավունքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն:

2.2. Սույն հրահանգի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն է համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր ռիսկով իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ են համարվում, մասնավորապես՝

2.2.1. Հայաստանի Հանրապետությունում արտադրանքի և ապրանքների իրացումից ստացված եկամուտը՝ անկախ վճարման վայրից:

Արտադրանքի և ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) իրացումից ստացված ոչ ռեզիդենտի եկամուտները որպես հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներ բնորոշելու համար հիմք է ընդունվում այդ ապրանքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքի փոփոխության փաստի առկայությունը՝ անկախ այն հանգամանքներից, թե՛

- ապրանքները իրացվել են ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտին կամ ֆիզիկական անձին.

- իրացված ապրանքների դիմաց վճարումը կատարվում է ռեզիդենտի կամ այլ ոչ ռեզիդենտի կամ ֆիզիկական անձի կողմից.

- իրացված ապրանքների դիմաց վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Սույն կետի դրույթները կիրառվում են նաև արժեթղթերի և արժութային արժեքների առուվաճառքի դեպքերում:

**Օրինակ 1** (սույն օրինակը և հրահանգում բերված մյուս օրինակները (այդ թվում՝ թվային տվյալները) պայմանական են՝ առանց անուղղակի հարկերի). Ոչ ռեզիդենտը տարվա ընթացքում Երևան քաղաքում գտնվող խանութի միջոցով իրականացվող առևտրական գործունեությունից (որի գծով ոչ ռեզիդենտը չի հանդիսանում հաստատագրված վճար վճարող) ստացել է՝

ա) 5,0 մլն դրամ՝ ապրանքների մանրածախ վաճառքից,

բ) 10,0 մլն դրամ՝ ապրանքների մեծածախ վաճառքից, որից՝

- 4,0 մլն դրամ՝ ռեզիդենտ հանդիսացող գնորդը վճարումը կատարել է անմիջապես խանութում՝ ապրանքներ գնելիս,

- 2,0 մլն դրամ գումարին համարժեք ԱՄՆ-ի դոլար՝ ռեզիդենտ հանդիսացող գնորդը վճարումը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ոչ ռեզիդենտի գլխավոր գրասենյակին՝ անկանխիկ ձևով,

- 3,0 մլն դրամ՝ ոչ ռեզիդենտ հանդիսացող գնորդը վճարումը կատարել է անմիջապես խանութում՝ ապրանքներ գնելիս,

- 1,0 մլն դրամ գումարին համարժեք ԱՄՆ-ի դոլար՝ ոչ ռեզիդենտ հանդիսացող գնորդը վճարումը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վաճառողի ներկայացուցչին՝ կանխիկ ձևով:

Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները կազմելու են 15,0 մլն դրամ (5,0+10,0):

Սույն կետի դրույթները չեն տարածվում ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտների նկատմամբ, որոնք Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չեն:

Սույն հրահանգի իմաստով՝ արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներկրելու հետ կապված (ապրանքների մաքսային փաստաթղթերի առկայության և տվյալ գործառնությունում ձեռնարկատիրական գործակալ (սույն հրահանգի 3.3.2 կետ) - միջնորդների բացակայության դեպքում) գործունեությունը, որի դեպքում ռեզիդենտը ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը:

Արտաքին տնտեսական գործունեության շարքին են դասվում, մասնավորապես, մատակարարման պայմանագրերով (երբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին) Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծումը և դրա հետ կապված մատակարարող ոչ ռեզիդենտի կողմից մատուցված ծառայությունների մատուցումը (տրանսպորտային (այդ թվում՝ օժանդակ) ծառայությունները, ապահովագրությունը և այլն), որոնք բխում են ապրանքների մատակարարման պայմաններից:

**Օրինակ 2.** Ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կնքված պայմանագրի համաձայն ոչ ռեզիդենտը իրականացնում է ապրանքների անմիջական մատակարարում Աթենքից (Հունաստան) դեպի Երևան (Երևան): Բեռնային մաքսային հայտարարագրից հետևում է, որ այդ ապրանքները ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն ռեզիդենտի կողմից: Պայմանագրի համաձայն ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտին ներկայացված հաշիվ-ապրանքագրի (invoice) հիման վրա ռեզիդենտը ոչ ռեզիդենտին վճարում է 10000 ԱՄՆ-ի դոլար, որից՝

- 8000 ԱՄՆ-ի դոլար՝ ապրանքների դիմաց,
- 1300 ԱՄՆ-ի դոլար՝ ապրանքների տեղափոխման համար,
- 500 ԱՄՆ-ի դոլար՝ ապրանքների ապահովագրման համար,
- 200 ԱՄՆ-ի դոլար՝ մինչև Հայաստանի Հանրապետության տարածք ներկրումը մաքսային ձևակերպումների համար:

Տվյալ դեպքում այդ գործունեությունից ոչ ռեզիդենտի ստացած եկամուտները (10000 ԱՄՆ-ի դոլար) համարվում են արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտներ և, հետևաբար, Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չեն:

Սույն օրինակում՝ եթե ապրանքներ մատակարարող ոչ ռեզիդենտին վճարվում է միայն ապրանքների արժեքը և մինչև Հայաստանի Հանրապետության տարածք հատելը մաքսային ձևակերպումների համար փոխհատուցում, իսկ ապրանքների տեղափոխումը և ապահովագրումը իրականացվել է այլ ոչ ռեզիդենտի (ոչ ռեզիդենտների) կողմից, ապա որպես արտաքին տնտեսական գործունեություն համարվելու է միայն ապրանքներ մատակարարող ոչ ռեզիդենտի ստացված եկամուտը (8200 ԱՄՆ-ի դոլար):

**2.2.2. Հայաստանի Հանրապետությունում ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը՝ անկախ վճարման վայրից:**

Ծառայությունների մատուցումից ստացված ոչ ռեզիդենտի եկամուտները որպես հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներ բնորոշելու համար որպես ընդհանուր սկզբունք հիմք է ընդունվում այդ ծառայությունների Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցման փաստի առկայությունը՝ անկախ այն հանգամանքներից, թե՛

- ծառայությունները մատուցվել են ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտին կամ ֆիզիկական անձին.
- մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ռեզիդենտի կամ այլ ոչ ռեզիդենտի կամ ֆիզիկական անձի կողմից.

- մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Մասնավորապես, ոչ ռեզիդենտի կողմից ներքոթվարկված ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները համարվելու են ստացված հայաստանյան աղբյուրներից, եթե՝

- ա) անշարժ գույքի հետ կապված ծառայությունների (այդ թվում՝ փորձագետների ծառայություններ, շինարարության նախապատրաստման և իրականացման ծառայություններ (ներառյալ՝ նախագծման, հետախուզման, վերահսկողության և այլ հարակից ծառայություններ) մատուցման դեպքում՝ անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է (նախատեսվում է կառուցվել) Հայաստանի Հանրապետության տարածքում.
- բ) տրանսպորտային ծառայությունների մատուցման դեպքում՝ այն մասով, որը վերաբերվում է բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների փաստացի փոխադրմանը Հայաստանի Հանրապետության տարածքով.

**Օրինակ 3.** Ոչ ռեզիդենտը տարվա ընթացքում Երևան քաղաքում գտնվող գրասենյակի միջոցով իրականացվող (մատուցվող) տրանսպորտային ծառայությունների դիմաց ստացել է՝

- 5,0 մլն դրամ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում բեռների փոխադրման համար,

- 1,0 մլն դրամ գումարին համարժեք փոխարկելի արտարժույթ, օտարերկրյա պետություններում սկսվող և Հայաստանի Հանրապետությունում ավարտվող բեռների փոխադրման, ընդ որում՝ ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված հաշիվներում Հայաստանի Հանրապետության տարածքում բեռների փոխադրման ծառայությունների արժեքը առանձնացված է և կազմում է 0,2 մլն դրամ գումարին համարժեք ԱՄՆ-ի դոլար,

- 2,0 մլն դրամ՝ Հայաստանի Հանրապետությունում սկսվող և օտարերկրյա պետություններում ավարտվող բեռների փոխադրման համար, ընդ որում՝ ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված հաշիվներում Հայաստանի Հանրապետության տարածքում բեռների փոխադրման ծառայությունների արժեքը առանձնացված է և կազմում է 0,3 մլն դրամ:

Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները կազմելու են 5,5 մլն դրամ (5,0+0,2+0,3):

գ) օժանդակ տրանսպորտային ծառայությունների (ապրանքների բեռնում, բեռնաթափում, բեռների մշակում, պահպանում և այլ ծառայություններ) մատուցման դեպքում՝ այդ ծառայությունների մատուցման ժամանակ ապրանքները փաստացի գտնվել են Հայաստանի Հանրապետության տարածքում.

դ) փոստային ծառայությունների մատուցման դեպքում՝ այդ ծառայությունները սկսվում և ավարտվում են Հայաստանի Հանրապետության տարածքում կամ արտահանվում են Հայաստանի Հանրապետությունից.

**Օրինակ 4.** Ոչ ռեզիդենտը տարվա ընթացքում Երևան քաղաքում գտնվող գրասենյակի միջոցով փոստային ծառայություններ (մասնավորապես՝ ծանրոցների (կապոցների), փաթեթների և նամակների փոխադրումների (այսուհետ՝ փոստառաքում) կազմակերպում) մատուցելու դիմաց ստացել է՝

- 5,0 մլն դրամ՝ Հայաստանի Հանրապետությունում սկսվող և ավարտվող փոստառաքումների կազմակերպման համար,

- 1,0 մլն դրամ գումարին համարժեք փոխարկելի արտարժույթ՝ օտարերկրյա պետություններում սկսվող և Հայաստանի Հանրապետությունում ավարտվող փոստառաքումների կազմակերպման համար,

- 2,0 մլն դրամ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում սկսվող և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող փոստառաքումների կազմակերպման համար:

Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները կազմելու են 7,0 մլն դրամ (5,0+2,0):

ե) հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման դեպքում՝ այդ ծառայությունները մատուցվել են հեռահաղորդակցության օպերատորների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող և (կամ) գրանցված հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

զ) տեղեկատվության հաղորդման ծառայությունների մատուցման դեպքում՝ այդ տեղեկատվությունները հաղորդվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հասցեից և (կամ) հասցեով.

է) գովազդային ծառայությունների մատուցման դեպքում՝ գովազդի պատրաստումը և (կամ) տարածումը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում.

**Օրինակ 5.** Ոչ ռեզիդենտը տարվա ընթացքում Երևան քաղաքում գտնվող գործակալության միջոցով իրականացվող գովազդային ծառայություններից ստացել է՝

- 5,0 մլն դրամ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գովազդային տեսաժապավենների և հայտարարությունների պատրաստման և տարածման համար,

- 2,0 մլն դրամ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր տեսակի տեղեկատվական միջոցներով (մամուլ և զանգվածային լրատվության մյուս միջոցներ) գովազդի տարածման համար,

- 3,0 մլն դրամ՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ռադիո և հեռուստատեսության միջոցով գովազդի տարածման համար:

Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները կազմելու են 7,0 մլն դրամ (5,0+2,0):

ը) աուդիտորական ծառայությունների մատուցման դեպքում՝ այդ ծառայությունների մատուցման օբյեկտը օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է համապատասխան գրանցում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից.

Այն դեպքերում, երբ ելնելով ոչ ռեզիդենտի կողմից մատուցված ծառայությունների բնույթից (մասնավորապես, խորհրդատվական, ինժեներական, իրավաբանական, հաշվապահական, թարգմանչական, տվյալների մշակման, ծրագրային ապահովման իրականացման և համանման այլ ծառայությունների մատուցման դեպքում) անհնար է դառնում միանշանակ դասել այդ ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները հայաստանյան կամ այլ աղբյուրներից ստացված եկամուտներին, ապա այդ եկամուտները վերագրվում են ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներին, քանի որ այդ

եկամուտները ստորաբաժանման կամ վայրի գործունեության արդյունք է և բացակայում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծառայությունների մատուցման վերաբերյալ բավարար փաստաթղթեր:

**Օրինակ 6.** Օրինակ 3-ում նշված դեպքում, եթե ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված հաշիվներից պարզ չէ, թե տրանսպորտային ծառայությունների արժեքների որ մասն է վերաբերվում Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ծառայությունների մատուցելուն, ապա ոչ ռեզիդենտի կողմից այդ գործունեությունից ստացված եկամուտները 3,0 մլն դրամ (1,0+2,0) գումարի չափով ամբողջությամբ համարվելու են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ:

2.2.3. «Հայաստանի Հանրապետությունում միջնորդական գործունեությունից (հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության ծառայություններ) ստացված եկամուտը (միջնորդավճարը՝ գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր):

Այն դեպքերում, երբ ելնելով ոչ ռեզիդենտի կողմից իրականացված միջնորդական գործունեության բնույթից անհնար է դառնում միանշանակ դասել այդ գործունեությունից ստացված եկամուտները հայաստանյան կամ այլ աղբյուրներից ստացված եկամուտներին, ապա այդ եկամուտները վերագրվում են ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներին, քանի որ այդ եկամուտները ստորաբաժանման կամ վայրի գործունեության արդյունք է և բացակայում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջնորդական գործունեության վերաբերյալ բավարար փաստաթղթեր՝ եթե այդ գործունեության գծով եկամուտները ստացվել են՝ ռեզիդենտից, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումից կամ վայրից, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուց:

*(2.2.3 կետը փոփ. 20.03.12 N 79-Ն)*

2.2.4. Կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, եթե դրանք համարվում են ծախս վճարող ստորաբաժանման կամ վայրի համար:

Սույն կետը վերաբերվում է այն դեպքերի, երբ նշված ծառայությունները մատուցվել են ոչ ռեզիդենտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող իր ստորաբաժանմանը կամ վայրին:

2.2.5. Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների թվին են դասվում նաև՝

ա) դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները՝ ոչ ռեզիդենտի կողմից համապատասխան կրեդիտորներին վճարման ենթակա միջոցները \*1.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի մարման գումարը, իսկ դուրս չգրված պարտքի մարման դեպքում՝ սահմանված կարգով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների գումարը \*1.

գ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված եկամուտը և (կամ) ավել ցույց տրված նվազեցումը.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրված կամ մշակված (վերամշակված) ապրանքներից (արտադրանքից) ստացված եկամուտը:

*(2.2.5 կետը լրաց. 10.05.01 N 02/605, փոփ. 14.03.02 N 02/354)*

2.3. Հայաստանյան աղբյուրներից ստացված ոչ ռեզիդենտի պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից՝ իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով), Հայաստանի Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝

### 2.3.1. Շահաբաժինները

Շահաբաժիններ են համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայաբաժնից) ստացված եկամուտները:

Ոչ ռեզիդենտի շահաբաժինները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ շահաբաժինները ստացվել են մասնակցությունից՝ ռեզիդենտ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում կամ ռեզիդենտ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում, ինչպես նաև ռեզիդենտ ինվեստիցիոն հիմնադրամներում:

### 2.3.2. Տոկոսները

Տոկոսներ են համարվում ցանկացած տեսակի պարտապահանջների (մասնավորապես, փոխառություն, վարկ, ապրանքային վարկ, առևտրային վարկ, ավանդ (դեպոզիտ), պարտատոմս, մուրհակ) դիմաց ստացված եկամուտները՝ անկախ պարտապահի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից:

Ոչ ռեզիդենտի տոկոսները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ տոկոսները ստացվել են, մասնավորապես՝

ա) փոխառության (երբ մի կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն փոխատուին վերադարձնում է միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք՝ տոկոսներով (որոնց չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը) կամ առանց տոկոսների) դիմաց՝ ռեզիդենտից, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումից կամ վայրից, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուց, որոնց հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը.

բ) վարկի (երբ բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ է տրամադրում փոխառուին, իսկ փոխառուն վերադարձնում է ստացված գումարը և դրանից վճարում է տոկոսներ) դիմաց՝ ռեզիդենտից, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումից կամ վայրից, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուց, որոնց հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը (սույն ենթակետում նշված դրույթները տարածվում են նաև միջբանկային վարկերից ոչ ռեզիդենտի ստացած եկամուտներին).

գ) ապրանքային վարկի (երբ մի կողմը մյուս կողմին տրամադրում է տեսակային հատկանիշներով որոշվող գույք, որի գծով և վճարվում են տոկոսները) դիմաց՝ ռեզիդենտից, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումից կամ վայրից, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուց, որոնց հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը.

դ) առևտրային վարկի (երբ պարտավորությունների կատարումը կապված է դրամական գումարը կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույքը մյուս կողմի սեփականության հանձնելու հետ, որից ելնելով նախատեսվում է վարկի տրամադրում՝ ներառյալ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար կանխավճարի, նախավճարի, դրանք ժամկետանց կամ տարածամկետ վճարելու ձևով) դիմաց՝ ռեզիդենտից, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումից կամ վայրից, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուց, որոնց հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը.

ե) ավանդի (դեպոզիտի) (երբ մի կողմը (բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը), ընդունելով մյուս կողմից (ավանդատուից) ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), ավանդատուին վերադարձնում է ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով դրանից վճարում է տոկոսներ) դիմաց՝ ռեզիդենտից, որի հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը.

զ) պարտատոմսի (արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք, ինչպես նաև պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ) դիմաց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկած պարտատոմսերի էմիտենտից (կամ վերջինիս լիազորված անձից), ներառյալ՝ այդ պարտատոմսերը մարելիս զեղչի ձևով, ինչպես նաև մասնակցության իրավունքով թողարկված պարտատոմսերից՝ մինչև վերջիններիս բաժնետոմսերի փաստացի ձևավորումը.

է) մուրհակի (արժեթուղթ, որը հավաստում է մուրհակ տվողի (հասարակ մուրհակ) կամ մուրհակում նշված այլ վճարողի (փոխանցելի մուրհակ՝ վճարագիր) որևէ բանով չպայմանավորված պարտավորությունը՝ մուրհակում նախատեսված ժամկետը լրանալիս որոշակի գումար վճարել մուրհակը տիրապետողին (մուրհակի տիրոջը)) դիմաց՝ ռեզիդենտից, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումից կամ վայրից, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուց, որոնց հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը.

ը) սահմանված կարգով ռեզիդենտի մոտ բացված ոչ ռեզիդենտի ցանկացած հաշվում (դեպոզիտային, հաշվարկային, ընթացիկ, թղթակցային և այլն) առկա մնացորդների դիմաց:

### 2.3.3. Ռոյալթիները

Ռոյալթիներ են համարվում գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումները օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի, կամ արդյունաբերական,

տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումները:

Ռոյալթի թվին են դասվում նաև համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգ) պայմանագրով (երբ մեկ կողմը (իրավատերը) պարտավորվում է վարձատրությամբ, ժամկետի նշումով կամ առանց դրա, մյուս կողմին (օգտագործողին) իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը, ներառյալ՝ իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ինչպես նաև պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների՝ ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքները) ոչ ռեզիդենտի ստացված եկամուտները: Համալիր թույլտվության պայմանագիրը նախատեսում է իրավատիրոջ բացառիկ իրավունքների, գործարար համբավի և առևտրային փորձի համալիրի որոշակի ծավալի (մասնավորապես, օգտագործման նվազագույն և (կամ) առավելագույն ծավալի սահմանման միջոցով) օգտագործում՝ նշելով կամ առանց նշելու այն իրականացնելու տարածքը ձեռնարկատիրական գործունեության որոշակի ոլորտում (վաճառել իրավատիրոջից ստացված կամ օգտագործողի կողմից արտադրված ապրանքները, իրականացնել այլ առևտրային գործունեություն, կատարել աշխատանքներ, մատուցել ծառայություններ):

Ոչ ռեզիդենտի ռոյալթիները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե ռոյալթի վճարողը հանդիսանում է՝ ռեզիդենտը, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումը կամ վայրը, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որոնց հետ կապված առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը:

#### 2.3.4. Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը

Գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտ է համարվում վարձատուի կողմից վարձակալին ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնված գույքի դիմաց ստացված վճարները, այդ թվում նաև ֆինանսական վարձակալությունից (լիզինգ) ստացված եկամուտը:

Ոչ ռեզիդենտի կողմից անշարժ գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքը վարձակալության տալուց: Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, շենքերը, շինությունները և հողին ամրակալված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այլ գույքի նշանակությանն անհամաչափ վնաս պատճառելու:

Ոչ ռեզիդենտի կողմից շարժական գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ գույքը վարձակալության պայմանագրի գործողության ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվում է (ենթակա է գրանցման) Հայաստանի Հանրապետությունում (բացառությամբ՝ օդանավերի) կամ այդ գույքը վարձակալության տալուց կամ վարձակալության պայմանագրի կնքման պահին գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Շարժական գույք է համարվում անշարժ չհամարվող գույքը:

Սույն կետով նախատեսված դրույթները չեն տարածվում վարձույթի պայմանագրերից (երբ որպես մշտական ձեռնարկատիրական գործունեություն գույքը վարձակալության հանձնող վարձատուին պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր (մինչև մեկ տարի ժամկետով) տիրապետմանը և օգտագործմանը հանձնել շարժական գույք) Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կամ վայրի միջոցով ստացված եկամուտներին: Այդ դեպքում կիրառվում են սույն հրահանգի 2.2.2 կետում նշված դրույթները:

Անկախ սույն և 2.3.2 կետերի դրույթներից միջազգային ֆինանսական վարձակալությունից (միջազգային լիզինգ) ստացված եկամուտ է ճանաչվում միայն լիզինգային պայմանագրում նշված տոկոսները:

**(2.3.4 կետը լրաց. 10.05.01 N 02/605, խմբ. 04.06.03 N 03/14-Ն)**

2.3.5. Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաձևը:

Ոչ ռեզիդենտի կողմից գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաձևը համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ, եթե այդ եկամուտը ստացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից: Ընդ որում՝

ա) գույքի և այլ ակտիվների Հայաստանի Հանրապետություն ներմուծման փաստը հաստատող փաստաթղթերի (բեռնամաքային հայտարարագիր) առկայության դեպքում գույքի և այլ ակտիվների ձեռքբերման արժեքը որոշվում է ելնելով վերջիններիս ներմուծմանը վերաբերող հաշիվ-ապրանքագրում (invoice) նշված արժեքից.

բ) գույքի և այլ ակտիվների ձեռքբերման փաստը հաստատող փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր, գնման ակտ և այլն) առկայության դեպքում այդ գույքի և այլ ակտիվների ձեռքբերման արժեքը որոշվում է ելնելով վերջիններիս ձեռքբերմանը վերաբերող փաստաթղթերում նշված արժեքից.

գ) մաշվածության կամ ամորտիզացիայի ենթակա գույքի և այլ ակտիվների օտարման դեպքում այդ գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաձև հաշվարկվում է դրանց մնացորդային արժեքից ելնելով.

դ) օրենքով սահմանված կարգով վերագնահատված գույքի և այլ ակտիվների օտարման դեպքում այդ գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաձև հաշվարկվում է դրանց վերագնահատված արժեքից ելնելով՝ եթե այդ վերագնահատման արդյունքները հաշվի են առնվում հարկվող շահույթը որոշելիս.

ե) դրամական միջոցների փոխանակման դեպքում գույքի արժեքի հավելաձև հաշվարկվում է վճարման ենթակա դրամական միջոցների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքի դրական տարբերությունը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

**Օրինակ 7.** 1997 թ.-ին ոչ ռեզիդենտը ռեզիդենտ ընկերության բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 6,0 հազ. դրամ անվանական արժեքով) ձեռք բերման համար վճարել է 5,0 մլն դրամ (1000 հատ x 5,0 հազ. դրամ), իսկ մեկ տարի անց այդ բաժնետոմսերի վաճառքի դիմաց գնորդներից ստացել է 12,0 մլն. դրամ (1000 հատ x 12,0 հազ. դրամ): Նշված գործարքների վերաբերյալ առկա են օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթեր:

Տվյալ դեպքում բաժնետոմսերի վաճառքի և ձեռք բերման արժեքներից առաջացած դրական տարբերությունը ( $12,0 - 5,0 = 7,0$  մլն դրամ) ոչ ռեզիդենտի համար համարվելու է հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտ:

**Օրինակ 8.** Ոչ ռեզիդենտի կողմից ներդրում է կատարվել ռեզիդենտի կանոնադրական հիմնադրամ՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված գույքի ձևով: Ոչ ռեզիդենտի կողմից այդ գույքը ձեռք է բերվել 10,0 մլն. դրամ արժեքով, իսկ ռեզիդենտի կանոնադրական հիմնադրամ ներդրում կատարելիս այն գնահատվել է 14,0 մլն դրամի չափով: Նշված գործարքների վերաբերյալ առկա են օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթեր:

Տվյալ դեպքում ներդրված գույքի գնահատման և ձեռք բերման արժեքներից առաջացած դրական տարբերությունը ( $14,0 - 10,0 = 4,0$  մլն դրամ) ոչ ռեզիդենտի համար համարվելու է հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտ:

Ոչ ռեզիդենտի կողմից օտարվող գույքի և այլ ակտիվների ձեռքբերման արժեքի վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերի բացակայության դեպքում հարկի դրույթաչափը կիրառվում է ոչ ռեզիդենտի կողմից օտարվող գույքի և այլ ակտիվների ամբողջ արժեքի (իրացման գներով) նկատմամբ:

**Օրինակ 9.** Ոչ ռեզիդենտը Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օտարումից ստացել է 500,0 հազ. դրամ: Ընդ որում՝ ոչ ռեզիդենտի կողմից այդ գույքի ձեռք բերման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված հիմնավորող որևէ փաստաթուղթ բացակայում է:

Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտի կողմից գույքի օտարումից ստացած ամբողջ գումարը (500,0 հազ. դրամ) համարվելու է հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտ:

*(2.3.5 կետը լրաց. 14.03.02 N 02/354, փոփ. 19.04.11 N 729-Ն, 20.03.12 N 79-Ն)*

#### 2.3.6. Այլ պասիվ եկամուտները

Այլ պասիվ եկամուտներ են համարվում նախորդ ենթակետերում չնշված այլ եկամուտները, մասնավորապես,

ա) ռենտայի (երբ ռենտա ստացողը ռենտա վճարողին սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարում է որոշակի գումար) վճարները, որոնք համարվում են ստացված հայաստանյան աղբյուրներից, եթե ռենտա վճարողը հանդիսանում է՝ ռեզիդենտը, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումը կամ վայրը, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որոնց հետ կապված առաջացել է ռենտայի վճարելու պարտավորությունը.

բ) սերվիտուտի (երբ հողամասի սեփականատերն հարևան հողամասի սեփականատիրոջից ձեռք է բերում այդ հողամասի սահմանափակ օգտագործման (մասնավորապես, հարևան հողամասով անցնելու և երթևեկելու, էլեկտրահաղորդման, կապի գծերի և խողովակաշարերի անցկացման ու շահագործման, ջրամատակարարման և հողաբարելավման, ինչպես նաև անշարժ գույքի սեփականատիրոջ այլ կարիքների համար) իրավունք) համար վճարները, որոնք համարվում են ստացված հայաստանյան աղբյուրներից, եթե սերվիտուտով ծանրաբեռնված հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում (սույն կետում նշված դրույթները կիրառվում են նաև այն դեպքերում, երբ սերվիտուտով ծանրաբեռնված են շենքերը, շինությունները և այլ անշարժ գույքը, որոնցից սահմանափակ օգտվելն անհրաժեշտ է):

2.4. Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտներ են համարվում սույն հրահանգի նախորդ կետերում չնշված եկամուտները, որոնք չեն հանդիսանում Հայաստանի



Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ, և որոնք մասնավորապես ստացված են՝

ա) կառավարման ծառայությունների դիմաց.

բ) գույքը արդյունավետ օգտագործելու կամ տրամադրված իրավունքներից արդյունավետ օգտվելու համար անհրաժեշտ օգնություն ցույց տալու դիմաց.

գ) սարքավորումների, հոսքագծերի, մեխանիզմների և հարմարանքների տեղակայման և շահագործման համար անհրաժեշտ օգնություն ցույց տալու դիմաց.

դ) ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական վճարներից (եթե այլ բան չի նախատեսված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ), ինչպես նաև ապահովագրական հատուցումներից.

ե) ցանկացած գիտական, արդյունաբերական կամ առևտրային նախագծի, պլանի, պրոցեսի կամ համատեղ ձեռնարկի ղեկավարումն իրականացնելու հետ կապված խորհրդատվությունների, օգնության և այլ ծառայությունների դիմաց.

զ) օտարերկրյա ընկերության կողմից իր դուստր ձեռնարկությանը մատուցված ծառայությունների և խորհրդատվությունների դիմաց՝ կապված վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետությունում ծավալած ձեռնարկատիրական գործունեության հետ, ինչպես նաև ոչ ռեզիդենտի գլխավոր գրասենյակի կողմից իր ստորաբաժանման օգտին տրամադրված խորհրդատվությունների և այլ ծառայությունների դիմաց.

է) բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց.

ը) ձեռնարկությունների հետ առևտրական միջնորդության պայմաններով ապրանքներն օտարերկրյա պետություններից ներկրելու և Հայաստանի Հանրապետությունում իրացնելու դիմաց:

2.4.1. Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտները որպես հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներ բնորոշելու համար, որպես ընդհանուր սկզբունք, հիմք է ընդունվում այդ եկամուտների ստացման հետ կապված Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխան ծառայությունների մատուցման, խորհրդատվությունների և օգնությունների տրամադրման փաստի առկայությունը:

Այն դեպքերում, երբ ելնելով ոչ ռեզիդենտի կողմից մատուցված ծառայությունների, տրամադրված խորհրդատվությունների և օգնությունների բնույթից անհնար է դառնում միանշանակ դասել վերջիններիս գծով ստացված եկամուտները հայաստանյան կամ այլ աղբյուրներից ստացված եկամուտներին, ապա այդ եկամուտները վերագրվում են ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներին, քանի որ բացակայում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծառայությունների մատուցման, խորհրդատվությունների և օգնությունների տրամադրման վերաբերյալ բավարար փաստարկներ և, մասնավորապես՝

2.4.1.1. Ոչ ռեզիդենտի կողմից սույն հրահանգի 2.4 կետի «ա»-«գ» և «ե» ենթակետերում նշված եկամուտները ստանալու դեպքում՝ այդ ծառայությունները մատուցվել կամ խորհրդատվությունները և օգնությունները տրամադրվել են՝ ռեզիդենտին, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կամ վայրին, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն:

2.4.1.2. Ոչ ռեզիդենտի կողմից սույն հրահանգի 2.4 կետի «դ» ենթակետում նշված եկամուտները ստանալու դեպքում՝

ա) ապահովագրական վճարները ստացվել են ապահովագրվող հանդիսացող՝ ռեզիդենտից, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումից կամ վայրից, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուց.

բ) վերաապահովագրական վճարները ստացվել են վերաապահովագրվող հանդիսացող ռեզիդենտից.

գ) ապահովագրական հատուցումները ստացվել են ապահովագրող հանդիսացող ռեզիդենտից:

**Օրինակ 10.** Սույն հրահանգի 2.2.1 կետում բերված օրինակ 2-ի վերջին պարբերությունում նշված դեպքում ռեզիդենտի կողմից ապրանքների ապահովագրում իրականացնող ոչ ռեզիդենտին վճարած 500 ԱՄՆ-ի դոլարը վերջինիս համար համարվելու է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ (ապահովագրական վճար):

2.4.1.3. Ոչ ռեզիդենտի կողմից սույն հրահանգի 2.4 կետի «զ» ենթակետում նշված եկամուտները ստանալու դեպքում՝ այդ ծառայությունները մատուցվել և խորհրդատվությունները տրամադրվել են Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իր դուստր (կախյալ) տնտեսական ընկերությանը կամ առանձնացված ստորաբաժանմանը:

2.4.2. Սույն հրահանգի 2.4 կետի «է» ենթակետում նշված դեպքում ոչ ռեզիդենտի կողմից բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտները համարվելու են ստացված հայաստանյան աղբյուրներից, եթե բեռները փոխադրվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հասցեից և (կամ) հասցեով:

Բեռի փոխադրման դեպքում փոխադրողը առաքողի կողմից իրեն վստահված բեռը հասցնում է նշանակված վայրը և այն հանձնում է բեռն ստանալու համար լիազորված անձին (ստացողին), իսկ առաքողը վճարում է բեռի փոխադրման համար սահմանված վարձը: Բեռի փոխադրումը հավաստվում է բեռնաառաքիչին տրանսպորտային բեռնագիր (կոնոսամենս կամ բեռի վերաբերյալ այլ փաստաթուղթ) հանձնելով:

Ֆրախտի (չարտերի) դեպքում մի կողմը (ֆրախտ տրամադրողը) մյուս կողմին (ֆրախտ ստացողին) բեռների փոխադրման համար վճարի դիմաց տրամադրում է տրանսպորտային միջոցի ամբողջ տարողունականությունը կամ դրա մի մասը՝ մեկ կամ մի քանի չվերթի համար:

**Օրինակ 11.** Սույն հրահանգի 2.2.1 կետում բերված օրինակ 2-ի վերջին պարբերությունում նշված դեպքում ռեզիդենտի կողմից ապրանքների տեղափոխում իրականացնող ոչ ռեզիդենտին վճարած 1300 ԱՄՆ-ի դոլարը վերջինիս համար համարվելու է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ (բեռների փոխադրում):

Սույն կետով նախատեսված դրույթները չեն տարածվում տրանսպորտային առաքումներից (երբ մի կողմը (առաքողը) վարձատրությամբ և մյուս կողմի (հաճախորդի՝ բեռն առաքողի կամ բեռն ստացողի) հաշվին կատարում կամ կազմակերպում է բեռի փոխադրման հետ կապված ծառայությունները) Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կամ վայրի միջոցով ստացված եկամուտներին: Այդ դեպքում կիրառվում են սույն հրահանգի 2.2.2 կետում նշված դրույթները:

2.4.3. Սույն հրահանգի 2.4 կետի «ը» ենթակետում նշված դեպքում հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ է համարվում ոչ ռեզիդենտին վճարած՝ նրա կողմից նշանակված իրացման և ավելի ձեռնտու գնի (որով միջնորդ ձեռնարկությունը փաստորեն իրականացրել է իրացման համար մատակարարված ապրանքի վաճառքը) տարբերությունը կամ տարբերության ոչ ռեզիդենտին պատկանող մասը՝ ըստ պայմանագրի: Այն դեպքերում, երբ որպես միջնորդ հանդիսանում է այլ ոչ ռեզիդենտը, ապա վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետությունում միջնորդական գործունեությունից ստացված եկամուտների հաշվարկման համար կիրառվում են սույն հրահանգի 2.2.3 կետի դրույթները:

Այդ գործարքներից ոչ ռեզիդենտի ստացած եկամուտները՝ նրա կողմից նշանակված իրացման գնի սահմաններում սույն հրահանգի 2.2.1 կետում նշված պայմանների բավարարման դեպքում համարվում են ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտ և Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չեն:

Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծումը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտը հաշվարկվում է ներմուծված ապրանքների իրացումից ստացված ամբողջ գումարից ելնելով:

Սույն կետում նշված դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ որպես միջնորդ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում նույն ոչ ռեզիդենտի ստորաբաժանումը կամ վայրը: Այդ դեպքերում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտը դիտվում է որպես Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կամ վայրի գործունեության արդյունք և հաշվարկվում է ներմուծված ապրանքների իրացումից ստացված ամբողջ գումարից ելնելով:

**Օրինակ 12.** Ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտի ապրանքներն ներմուծվում են Լեհաստանից և իրացվում Հայաստանի Հանրապետությունում՝ ոչ ռեզիդենտի կողմից նշանակված գներից ոչ պակաս, որոնցից ելնելով հաշվարկված եկամուտը կազմում է 25000 ԱՄՆ-ի դոլար (որը համապատասխանում է ներմուծված ապրանքների հաշիվ-ապրանքագրում (invoice) նշված արժեքին):

Ռեզիդենտի վարձատրությունը կատարվում է իրացված ապրանքների վաճառքից (փաստացի իրացման գներից ելնելով) ստացված եկամուտների 3%-ի չափով: Ռեզիդենտը ապրանքները փաստացի վաճառել է ոչ ռեզիդենտի կողմից նշանակված գներից ավելի բարձր գներով, որոնցից ելնելով հաշվարկված եկամուտը կազմում է 26000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:

Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտի կողմից նշանակված իրացման և ավելի ձեռնտու գների (որով միջնորդ ձեռնարկությունը փաստորեն իրականացրել է իրացման համար մատակարարված ապրանքի վաճառքը) տարբերության ստացած ամբողջ գումարը՝ 1000 ԱՄՆ-ի դոլարը (26000-25000) համարվելու է հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտ, իսկ 25000 ԱՄՆ-ի դոլարը՝ ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտ: Ռեզիդենտի եկամուտները կազմելու են 780 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (26000x3%): Այդ գործարքից ռեզիդենտից ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 25220 ԱՄՆ-ի դոլար (26000-780):

**Օրինակ 13.** Օրինակ 12-ում նշված դեպքում, եթե ռեզիդենտի վարձատրությունը կատարվում է իրացված ապրանքների գծով փաստացի իրացման գների և ոչ ռեզիդենտի կողմից նշանակված իրացման գների տարբերությունից ելնելով՝ 75%-ի չափով, ապա ոչ ռեզիդենտի կողմից նշանակված իրացման և ավելի ձեռնտու գների (որով միջնորդ ձեռնարկությունը փաստորեն իրականացրել է իրացման համար մատակարարված ապրանքի վաճառքը) տարբերության իրեն պատկանող մասը՝ 250 ԱՄՆ-ի դոլարը (26000-25000-1000x25%) համարվելու է հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտ, իսկ 25000 ԱՄՆ-ի դոլարը՝ ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտ: Ռեզիդենտի եկամուտները կազմելու են 750

ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (1000x75%): Այդ գործարքից ռեզիդենտից ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 25250 ԱՄՆ-ի դոլար (26000-750):

2.4.5. Հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտների թվին են դասվում նաև՝

ա) անհատույց ստացված ակտիվները (անհատույց ստացված անշարժ գույքի դեպքում՝ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գնտվող անշարժ գույքի արժեքը), պարտավորությունների գեղջումից կամ ներումից ստացվող եկամուտները (բացառությամբ՝ օրենքով տրվող հարկային արտոնությունների, պետական կամ համայնքային բյուջեներ վճարվող այլ պարտադիր վճարների և տուրքերի, բնօգտագործման վճարների գծով տրվող արտոնությունների գումարների, ինչպես նաև սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները),

բ) պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները.

գ) տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների տեսքով եկամուտները (բացառությամբ՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի համաձայն պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին (բացառությամբ՝ պետական բյուջե հավաքագրվող գույքահարկի և հողի հարկի) վերաբերող գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների վերադարձն օրենքով սահմանված ժամկետից 90 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար ոչ ռեզիդենտի օգտին հաշվեգրված տույժերի).

դ) անվավեր ձանաչված գործարքներից ստացվող եկամուտները:

**(2.4.5 կետը փոփ. 19.04.11 N 729-Ն, լրաց. 20.03.12 N 79-Ն)**

2.5. Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ չեն համարվում՝

2.5.1. Համատեղ գործունեության (երբ երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) միացնում են իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործում են՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար) նպատակով միավորվող միջոցները:

2.5.2. Արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքը \*2:

2.5.3. Օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

2.5.4. Օրենքով տրվող հարկային արտոնությունների, պետական կամ համայնքային բյուջեներ վճարվող այլ պարտադիր վճարների և տուրքերի, բնօգտագործման վճարների գծով տրվող արտոնությունների գումարները, ինչպես նաև սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները:

**(2.5.4 կետը խմբ. 19.04.11 N 729-Ն)**

2.5.5. Ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող ոչ ռեզիդենտի անհատույց ստացված ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները.

**(2.5.5 կետը լրաց. 19.04.11 N 729-Ն)**

2.5.6. Յուրաքանչյուր հարկատեսակի (այդ թվում՝ հարկերին փոխարինող վճարների), տուրքերի և պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների, տույժերի և տուգանքների մինչև 100 դրամ պարտավորությունների գումարները, որոնք ոչ ռեզիդենտի լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում անտեսվում են:

**(2.5.6 կետը լրաց. 19.04.11 N 729-Ն)**

2.5.7. Ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող միջոցները (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից): Ընդ որում՝ ներդրումային ֆոնդերի մասնակիցների հարկվող շահույթը որոշելիս ներդրումային ֆոնդերում մասնակցության հետ կապված նվազեցումները (ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ) համախառն եկամտից չեն նվազեցվում:

**(2.5.7 կետը լրաց. 19.04.11 N 729-Ն)**

2.5.8. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի համաձայն պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին (բացառությամբ՝ պետական բյուջե հավաքագրվող գույքահարկի և հողի հարկի) վերաբերող գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների վերադարձն օրենքով

սահմանված ժամկետից 90 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար ոչ ռեզիդենտի օգտին հաշվեգրված տույժերը:

*(2.5.8 կետը լրաց. 20.03.12 N 79-Ն)*

### 3. Ոչ ռեզիդենտի ստորաբաժանումը և գործունեության վայրը

3.1. Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտը ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնում է ստորաբաժանման (ստորաբաժանումների) և (կամ) վայրի (վայրերի) միջոցով:

3.2. Ոչ ռեզիդենտի ստորաբաժանումը՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանումն է (ներկայացուցչություն, մասնաձյուղ):

3.2.1. Սույն հրահանգի իմաստով՝ ներկայացուցչություն է համարվում ոչ ռեզիդենտի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է ոչ ռեզիդենտի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

3.2.2. Սույն հրահանգի իմաստով՝ մասնաձյուղ է համարվում ոչ ռեզիդենտի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառնությունները:

3.2.3. Ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանումն (ներկայացուցչությունը, մասնաձյուղը) իրավաբանական անձ չի և գործում է ոչ ռեզիդենտի հաստատած կանոնադրության հիման վրա:

Ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանման ղեկավարը նշանակվում է ոչ ռեզիդենտի կողմից ու գործում է նրա լիազորագրի հիման վրա:

3.3. Ոչ ռեզիդենտի գործունեության իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետությունում առանձնացված ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտի Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստացի վայրն է:

3.3.1. Վայրի թվին են դասվում, մասնավորապես, ոչ ռեզիդենտի Հայաստանի Հանրապետությունում գտնվող գրասենյակը, գործակալությունը, գործարանը, ֆաբրիկան, արտադրամասը, հանքահորը, հանքավայրը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարները հետախուզելու, արդյունահանելու և շահագործելու վայրը, պայմանագրով իրականացվող շինարարական, տեղակայման, մոնտաժային, կարգավորման, հավաքման, հետազոտման աշխատանքների, սարքավորումների սպասարկման, խորհրդատվական, այլ մասնագիտական ծառայություններ մատուցելու, ինչպես նաև նշված աշխատանքները վերահսկելու վայրը:

3.3.2. Ձեռնարկատիրական գործակալի միջոցով գործունեություն իրականացնելու դեպքում ոչ ռեզիդենտի գործունեության իրականացման վայր է համարվում ձեռնարկատիրական գործակալի գտնվելու վայրը:

Ձեռնարկատիրական գործակալը՝ ռեզիդենտ համարվող իրավաբանական անձ, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն կամ ֆիզիկական անձն է, որի գործունեությունը ոչ ռեզիդենտի կողմից վերահսկվում է հանձնարարության պայմանագրի, լիազորագրային կառավարման պայմանագրի կամ լիազորագրի (գրավոր լիազորագրություն) հիման վրա կամ այլ ձևով, և որը ոչ ռեզիդենտի (լիազորող անձի) համար իրականացնում է գործունեություն:

Ձեռնարկատիրական գործակալը գործունեությունը իրականացնում է, մասնավորապես, հետևյալ նպատակների համար՝

ա) գնումներ կազմակերպելու, գնումներ կատարելու և այլ պայմանագրեր կնքելու,

բ) երրորդ անձանց հետ գործակալական պայմանագրային հարաբերություններ հաստատելու, լիազորող անձին պատկանող ապրանքները կանոնավոր ձևով կուտակելու, պահեստավորելու և լիազորող անձի անունից այլ անձանց այդպիսի ապրանքներ առաքելու,

գ) առևտրական պայմանագրեր կնքելիս կամ գնման պատվերներ կատարելիս լիազորող անձին ներկայացնելու:

Հանձնարարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (հանձնարարողի) անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ): Հանձնարարության պայմանագիրը կնքվում է այն ժամկետի նշումով, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից կամ առանց դրանց:

Գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ: Երրորդ անձի հետ իր անունից և պրինցիպալի հաշվին կնքված գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում գործակալը,

թեկուզև պրինցիպալը վկայակոչված լինի գործարքում և գործարքը կատարելու հետ կապված անմիջական հարաբերությունների մեջ մտած լինի երրորդ անձի հետ: Երրորդ անձի հետ պրինցիպալի անունից և նրա հաշվին գործակալի կնքած գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում անմիջականորեն պրինցիպալը: Գործակալության պայմանագիրը կարող է կնքվել դրա գործողության որոշակի ժամկետով կամ առանց դրա:

#### 4. Համախառն եկամտի նվազեցումները

Ստորաբաժանման կամ վայրի հարկվող շահույթը որոշելիս թույլատրվում է ոչ ռեզիդենտի կողմից Հայաստանի Հանրապետությունում իր ստորաբաժանման կամ վայրի նպատակների համար կատարված ծախսերի, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեության կապակցությամբ կրած կորուստների չափով նվազեցում՝ սույն հրահանգով սահմանված կարգով ներկայացված հայտարարագրի հիման վրա:

Ստորաբաժանման հարկվող շահույթը որոշելիս նրա համախառն եկամուտը նվազեցվում է նաև սույն հրահանգով սահմանված այլ նվազեցումների չափով:

Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

4.1. Համախառն եկամտից նվազեցվում են դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար ոչ ռեզիդենտի կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

Ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռքբերման (և համապատասխան դեպքերում՝ այլ անձանց եկամուտներին վերաբերող) փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*(4.1 կետը լրաց., խմբ., փոփ. 10.05.01 N 02/605, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն)*

4.1.1. Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես.

ա) նյութական (արտադրական բնույթի, վարչական և ընդհանուր տնտեսական նշանակության, իրացման (կոմերցիոն) բնույթի) ծախսերը:

Այստեղ ներառվում են նյութական ռեսուրսների (ապրանք, հումք, նյութեր, վառելիք, էներգիայի բոլոր տեսակներ, սահմանված կարգով անմիջականորեն դուրս գրվող գործիքներ, հարմարանքներ, սարքեր, լաբորատոր սարքավորումներ, հատուկ հագուստներ և այլ արագամաշ առարկաներ (շահագործման հանձնման պահից), համալրվող շինվածքներ, կիսապատրաստուկներ, պահեստամասեր, դետալներ, տարա և այլն) արժեքը, որոնք ոչ ռեզիդենտի գործունեության ընթացքում անմիջականորեն սպառվում են կամ իրենց արժեքն ամբողջությամբ փոխանցում են արտադրվող արտադրանքին, մատուցվող ծառայությանը (կապիտալացվում են):

Նյութական ռեսուրսների սկզբնական արժեքը ձևավորվում է փաստացի ձեռքբերման գներից (անհատույց ստացվածները՝ ընդունման-հանձնման փաստաթղթերի տվյալներով և, եթե այդ փաստաթղթերում նշված չէ գույքի արժեքը, ապա այն գնահատվում է տվյալ ոչ ռեզիդենտի մոտ առկա համանման գույքի արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով), կոմիսիոն վարձատրություններից, ապրանքային և ֆոնդային բորսաների ծառայությունների (ներառյալ՝ բրոքերային ծառայությունների) արժեքից, եթե դրանք կատարվում են կողմնակի անձանց կողմից, ինչպես նաև ներմուծման համար սահմանված մաքսատուրքերից, մաքսային ծառայության համար կատարված վճարներից, բեռնման-բեռնաթափման աշխատանքների, տրանսպորտային ծառայությունների արժեքներից և տեղափոխման հետ կապված ապահովագրական վճարներից՝ առանց փոխհատուցվող հարկերի:

բ) աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները, որի մեջ ներառվում են ոչ ռեզիդենտի ինչպես հիմնական արտադրական և ոչ արտադրական անձնակազմի, այնպես էլ այլ վարձու աշխատողների աշխատավարձը (ներառյալ՝ խթանող և հավելյալ վճարները):

Խթանող վճարներ են համարվում, մասնավորապես՝ արտադրական ցուցանիշների համար պարգևատրումները, տարվա աշխատանքի արդյունքների համար պարգևատրումը, պրոֆեսիոնալ վարպետության համար տրվող հավելումները, երկարամյա ծառայության համար արտադրական աշխատողներին տրվող միանվագ պարգևատրումները (տվյալ տնտեսությունում մասնագիտության գծով աշխատանքային ստաժի համար հավելավճարները):

Հավելյալ վճարներ են (կապված աշխատանքային ռեժիմի և պայմանների հետ) համարվում գիշերային աշխատանքի, արտաժամյա աշխատանքի, հանգստյան և տոն (ոչ աշխատանքային) օրերի, բազմաժամ ռեժիմով աշխատանքի, մասնագիտությունների համատեղման, սպասարկման գոտիների ընդլայնման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծանր, վնասակար և խիստ վնասակար համարվող աշխատանքի պայմաններում աշխատանքի համար աշխատավարձի նկատմամբ սահմանված հավելավճարներն ու լրավճարները:

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների մեջ են ներառվում նաև հերթական (ամենամյա) և լրացուցիչ արձակուրդների վարձատրությունը), անչափահասների արտոնյալ ժամերի, կերակրող մայրերին աշխատանքի ընթացքում տրվող ընդմիջումների, ինչպես նաև պետական պարտավորությունների կատարման հետ կապված ժամանակի վարձատրությունը, աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով բժշկական հետազոտությունների գծով ծախսերը, աշխատավարձի մասնակի պահպանմամբ հարկադրված արձակուրդում գտնվող աշխատողներին վճարվող գումարները, աշխատող դոնորներին հետազոտվելու (գնում), արյուն հանձնելու և յուրաքանչյուր անգամ արյուն հանձնելուց հետո հատկացվող հանգստի օրերի համար կատարվող վճարումները, ոչ աշխատողի մեղքով պարապորդի ժամանակ վճարվող գումարները և աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված այլ վճարումները:

գ) աշխատանքից ազատման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով և չափերով վարձու աշխատողներին վճարվող արձակման նպաստները և չօգտագործված արձակուրդների համար փոխհատուցման գումարները:

դ) գործատուների կողմից աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից օրենքով սահմանված կարգով և չափերով կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

ե) ամորտիզացիոն մասհանումները՝ ոչ ռեզիդենտի գործունեությանը բազմակի անգամ մասնակցող ակտիվների (հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ, այլ մաշվող ակտիվներ) ամորտիզացիայի (մաշվածության) գումարները:

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են ոչ ռեզիդենտին սեփականության իրավունքով պատկանող (կամ ֆինանսական վարձակալության վերցված) և գործունեության մեջ օգտագործվող հիմնական միջոցների (բացառությամբ՝ հողամասերի) գծով (ֆինանսական վարձակալության դեպքում՝ ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում է վարձակալը, իսկ վարձատուն ամորտիզացիոն մասհանումներ չի կատարում): Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար ստորև բերված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից:

- շենքերի և շինությունների (բացառությամբ՝ հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի ու շինությունների), փոխանցվող հարմարանքների համար՝ 20 տարի,

- հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի ու շինությունների համար՝ 10 տարի,

- հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար՝ 3 տարի,

- հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար՝ 1 տարի,

- այլ հիմնական միջոցների (այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար)՝ 5 տարի:

Աղետի գոտում գտնվող շենքերի և շինությունների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 1 տարի:

Գյումրի քաղաքում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների համար Գյումրի քաղաքում գտնվող շենքերի, շինությունների, փոխանցվող հարմարանքների, հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի և Գյումրի քաղաքում տեղակայված այլ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 1 տարի՝ Գյումրի քաղաքում գտնվելու (տեղակայվելու) ժամանակաշրջանում: Եթե Գյումրի քաղաքում գտնվող (տեղակայված) հիմնական միջոցների նկատմամբ կիրառվել են նշված ամորտիզացիոն նվազագույն ժամկետները, և այդ հիմնական միջոցները տեղափոխվել են Գյումրի քաղաքից դուրս (առանց այլ անձանց օտարման), ապա ոչ ռեզիդենտը պետք է վճարի արագացված ամորտիզացիայից օգտված լինելու հետևանքով պակաս վճարված շահութահարկը և շահութահարկը (այդ թվում՝ շահութահարկի կանխավճարների գումարները) ու շվարելու համար սահմանված տույժերը:

Մինչև 50,0 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 1 տարի:

Ոչ ռեզիդենտին իրավունք է վերապահված իր հայեցողությամբ ընտրելու հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ (բայց ոչ պակաս տվյալ խմբի համար վերը նշված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից):

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես այդ հիմնական միջոցների սկզբնական (ծեռքբերման) արժեքի, իսկ օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման դեպքում՝ վերագնահատման արժեքի և տվյալ խմբի համար վերը նշված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն: Ընդ որում՝ հաշվետու տարվա հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա են հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն

մասհանումների գումարները՝ այդ հիմնական միջոցների շահագործման (գործունեության մեջ օգտագործման) ժամանակահատվածին համապատասխան:

Տարվա ընթացքում նոր հիմնական միջոցներ մուտքագրելու դեպքում ոչ ռեզիդենտները հաշվետու տարում դրանց գծով ամորտիզացիոն մասհանումները հաշվարկում են այդ հիմնական միջոցները շահագործման հանձնելու պահից սկսած՝ հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման ակտի հիման վրա: Հիմնական միջոցների շահագործումից հանման ակտի հիման վրա շահագործումից հանված (այդ թվում՝ ժամանակավորապես) հիմնական միջոցների գծով այդ ժամանակաշրջանի համար ամորտիզացիոն մասհանումներ չեն կատարվում:

Հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցների վաճառքի դեպքում համախառն եկամտից նվազեցվում է այդ հիմնական միջոցների մնացորդային (հաշվեկշռային) արժեքը (սկզբնական (ծեռքբերման) արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը՝ հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները):

Հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցների վերագնահատման արդյունքները հաշվի չեն առնվում (բացառությամբ՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների): Դա, մասնավորապես, նշանակում է՝

- վերագնահատման արդյունքում առաջացած հիմնական միջոցների արժեքի աճը կամ նվազումը հաշվի չի առնվում և այդ հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումները վերագնահատումից հետո ևս կատարվում են սկզբնական (ծեռքբերման) արժեքից ելնելով,

- հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցների վաճառքի դեպքում համախառն եկամտից նվազեցվում է այդ հիմնական միջոցների մնացորդային (հաշվեկշռային) արժեքը (սկզբնական (ծեռքբերման) արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը):

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշվում է ոչ ռեզիդենտի կողմից՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Այդ ժամկետների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետ է սահմանվում 10 տարի (բայց ոչ ավելի, քան ոչ ռեզիդենտի գործունեության ժամկետը): Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես դրանց սկզբնական (ծեռքբերման) արժեքի և ոչ նյութական ակտիվների համար սահմանված (որոշված) ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն: Հարկվող շահույթը որոշելիս ոչ նյութական ակտիվների վաճառքի դեպքում համախառն եկամտից նվազեցվում է այդ ոչ նյութական ակտիվների մնացորդային (հաշվեկշռային) արժեքը (սկզբնական (ծեռքբերման) արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը՝ հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները):

Մաշվող այլ ակտիվների մաշվածության գումարը բաշխվում է ամորտիզացիոն ժամկետում գծային մեթոդով՝ շահագործման հանձնման պահից: Հարկվող շահույթը որոշելիս ոչ ռեզիդենտը իր հայեցողությամբ ընտրում է մաշվող այլ ակտիվների ամորտիզացիոն ժամկետներ՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Հարկվող շահույթը որոշելիս մաշվող այլ ակտիվների վաճառքի դեպքում համախառն եկամտից նվազեցվում է այդ մաշվող ակտիվների մնացորդային (հաշվեկշռային) արժեքը (սկզբնական (ծեռքբերման) արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը՝ հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները):

Զեռք բերված մաշվող ակտիվների (հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ, այլ մաշվող ակտիվներ) գծով ձեռք բերումից հետո «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների ճշգրտումները (ավելացումները, պակասեցումները) չեն փոփոխում տվյալ մաշվող ակտիվի սկզբնական (ծեռքբերման) կամ հաշվեկշռային արժեքը՝ ավելացվող գումարները ներառվում են տվյալ հաշվետու տարվա համախառն եկամտի մեջ, իսկ պակասեցվող գումարները ներառվում են ժամանակաշրջանի ծախսերի մեջ և համախառն եկամտից նվազեցվում են ընդհանուր սահմանված կարգով:

գ) ապահովադիրների կողմից կատարված ապահովագրական վճարները, վերաապահովագրության պայմանագրերի համաձայն վճարված կոմիսիոն վարձատրության ծախսերը:

Այստեղ, մասնավորապես, ներառվում են ապահովադիր հանդես եկող ոչ ռեզիդենտի գույքի (հիմնական միջոցների, արտադրական պաշարների, պատրաստի արտադրանքի և այլ ակտիվների) ապահովագրության նպատակով կատարված ապահովագրական վճարները (բացառությամբ՝ ակտիվի սկզբնական (ծեռքբերման) արժեքում ներառվող ապահովագրական վճարների), ինչպես նաև ապահովադիր հանդես եկող ոչ ռեզիդենտների կողմից իր աշխատողների համար կատարված ապահովագրական վճարները, եթե այդ վճարումների կատարումը պարտադրված է օրենքով կամ գործատու հանդիսացող ոչ ռեզիդենտների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով:

է) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը (այդ թվում՝ գույքահարկ, հողի հարկ, ավելացված արժեքի հարկ), պետական տուրքերը, տեղական տուրքերը (վճարները) և այլ պարտադիր վճարները և բնօգտագործման վճարները (այդ թվում՝ ռոյալթիները), բացառությամբ՝ ակտիվի սկզբնական (ծեռքբերման) արժեքում ներառվող վճարումների: Մասնավորապես՝ չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերի թվին են

դասվում «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված մասնակի հատուցմամբ իրականացվող գործարքների մասով և նույն հոդվածի 12-րդ մասով սահմանված դեպքերում լրացուցիչ հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գումարները, ինչպես նաև նույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված դեպքերում որևէ հատուցման դիմաց իրականացվող գործարքների մասով ավելացված արժեքի հարկի գումարների միջև առաջացող և չհաշվանցվող բացասական տարբերությունը.

ը) վարկերի և փոխառությունների տոկոսները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնակի չափը չգերազանցող մասով (բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 23.07.2002 թ. N 245-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման և սահմանման» կարգին համապատասխան և հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր» պարբերականում):

Այստեղ, մասնավորապես, ներառվում են ոչ ռեզիդենտի ստացած բոլոր տեսակի վարկերի (կարճաժամկետ, երկարաժամկետ, տարկետված, հետաձգված, երկարաձգված, ժամկետանց, կետանցված), դրամական և գույքային փոխառությունների (այդ թվում՝ արտարժույթով ստացվածներինը) և այլ ներգրավված միջոցների դիմաց վճարվող տոկոսները, գույքի ֆինանսական վարձակալության դիմաց վճարվող տոկոսները.

Ընդ որում՝ բանկ և (կամ) վարկային կազմակերպություն չհամարվող ոչ ռեզիդենտ կազմակերպության մոտ բանկ և (կամ) վարկային կազմակերպություն չհամարվող ռեզիդենտ կամ այլ ոչ ռեզիդենտ սուբյեկտներից ներգրավված փոխառությունների դիմաց հաշվետու տարում վճարման ենթակա (հաշվարկվող) տոկոսները համախառն եկամտից նվազեցվում են տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության գուտ ակտիվների կրկնապատիկը չգերազանցող չափով, իսկ բանկ և (կամ) վարկային կազմակերպություն համարվող ոչ ռեզիդենտ կազմակերպության մոտ բանկ և (կամ) վարկային կազմակերպություն չհամարվող ռեզիդենտ կամ այլ ոչ ռեզիդենտ սուբյեկտներից ներգրավված փոխառությունների դիմաց հաշվետու տարում վճարման ենթակա (հաշվարկվող) տոկոսները համախառն եկամտից նվազեցվում են տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության գուտ ակտիվների իննապատիկը չգերազանցող չափով: Նշված դրույթի կիրառման առումով ոչ ռեզիդենտի գուտ ակտիվները հաշվարկվում են հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանման (մասնաձյուղ, ներկայացուցչություն) ակտիվների և պարտավորությունների՝ հարկման նպատակով ձանաչվող արժեքների դրական տարբերության (այսինքն՝ հարկային հաշվառման արդյունքում ձևավորված սեփական կապիտալի հաշվեկշռային արժեքի) չափով: Սույն պարբերությամբ նշված սահմանափակումները տարածվում են 2012 թվականի հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակահատվածներին վերաբերող տոկոսների վրա: Սույն պարբերության դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ միջազգային զարգացման կազմակերպություններից ստացված փոխառությունների դիմաց վճարման ենթակա (հաշվարկվող) տոկոսների, ինչպես նաև պարտքային արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման միջոցով ներգրավված միջոցների դիմաց վճարման ենթակա (հաշվարկվող) տոկոսների վրա.

թ) երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային, ապահովագրական ու վարկային կազմակերպությունների այլ ծառայությունների համար վճարները.

ժ) գովազդային, մարքետինգի, կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերը, ընդ որում՝ հարկվող շահույթը որոշելիս Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գովազդային, մարքետինգի, կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափերի սահմաններում.

ժա) ներկայացուցչական, հովանավորչական և կառավարման ծառայությունների ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափերի սահմաններում.

ժբ) գործուղման ծախսերը (մասնավորապես՝ օրապահիկ, գիշերավարձ, տրանսպորտային ծախսեր, ժամանակավոր գրանցման հետ կապված ծախսեր) և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում՝ հատուցման գումարները, ընդ որում՝ հարկվող շահույթը որոշելիս Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում՝ հատուցման գումարները համախառն եկամտից նվազեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափերի սահմաններում (այդ չափերի սահմաններում օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում՝ հատուցման գումարները համախառն եկամտից նվազեցվում են՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից).

ժգ) հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատողներին օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափերի սահմաններում.

ժդ) դատական ծախսերը.

ժե) ոչ ռեզիդենտի կողմից այլ անձանց պատճառած վնասի հատուցումը.



ժգ) քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (տնտեսական պայմանագրերի պայմանները խախտելու) համար զանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ պատժամիջոցները (բացառությամբ՝ պետական և համայնքների բյուջեներ զանձվող տույժերի, տուգանքների և այլ գույքային պատժամիջոցների)։

ժէ) աշխատողների (աշխատուժի) հավաքագրման ծախսերը։

ժը) աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը։

ժթ) ֆակտորինգային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը։

ի) գործառնական վարձակալության վերցված գույքի դիմաց վարձակալի կողմից կատարվող վարձավճարները։

իա) ծառայության երաշխիքային ժամկետ ունեցող արտադրատեսակների (ապրանքների) երաշխիքային նորոգման և սպասարկման ծախսերը։

իբ) գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծառայությունների հետ կապված ծախսերը։

իգ) արտադրանքի սերտիֆիկացման աշխատանքների վճարման հետ կապված ծախսերը։

իդ) կոնսերվացված արտադրական հզորությունների և օբյեկտների պահպանման հետ կապված ծախսերը։

իե) խոտանից կորուստները (հայտնաբերված վերջնական խոտանի արժեքը, խոտանի շտկման ծախսերը, երաշխավորված նորոգման ծախսերը) և տվյալ տարվա համախառն եկամտի ստացման հետ կապված, տեխնոլոգիապես անհրաժեշտ, սակայն արտադրանք չտված արտադրության ծախսերը։

իզ) ներարտադրական պատճառներով պարապուրդից կորուստները։

իէ) ոչնչացված գույքի արժեքը, եթե այդ գույքի ոչնչացումը օրենքով սահմանված դեպքերում հանդիսանում է պարտադիր պահանջ, որի չկատարումը հանգեցնում է (կարող է հանգեցնել) ոչ ռեզիդենտի գործունեության իրավական սահմանափակմանը (մասնավորապես՝ լիցենզիայի ուժը կորցրած ձանաչելու կամ լիցենզիայի գործողության կասեցմանը)։

իը) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ այդ հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10%-ին փոխհատուցվող ուսման տարեկան վարձը (հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը)։

իթ) ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին կատարվող պարտադիր վճարները, որոնք կատարվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիա (բացառությամբ՝ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների լիցենզիայի և վճարային գործարքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի լիցենզիայի) ունեցող ոչ ռեզիդենտների կողմից։

լ) վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության երկրորդ, երրորդ և չորրորդ աշխատանքային օրվա համար գործատու հանդիսացող ոչ ռեզիդենտի միջոցների հաշվին վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների (բացառությամբ՝ հղիության ու ծննդաբերության նպաստների) գումարները։

լա) գործատու հանդիսացող ոչ ռեզիդենտի կողմից վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կատարված վճարները։ Ընդ որում՝ մինչև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պարտադիր կուտակային վճարումներ կատարելու պարտավորության ուժի մեջ մտնելու ամսվա վերջին օրը, ոչ ռեզիդենտի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ոչ ռեզիդենտի յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ոչ ռեզիդենտի կատարած կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումների 50%-ի չափով (բայց ոչ ավելի, քան տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 2.5%-ի չափով) և այդ նվազեցումը, սույն հրահանգի 4.4-րդ կետի «ժբ» ենթակետում նշված նվազեցման թույլատրելի չափի հետ չպետք է գերազանցի ոչ ռեզիդենտի կատարած՝ տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 7.5%-ը։

Ամբողջ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված՝ Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների համար սույն կետում նշված ծախսերը, որոնց մասով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից նվազեցման համար սահմանված են առավելագույն չափեր, հաշվի են առնվում ամբողջությամբ (բացառությամբ՝ օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարան դեպքերում հատուցման գումարների, որոնք հաշվի են առնվում սույն հրահանգի 4.1.1 կետի «ժբ» պարբերության համապատասխան)։

**(4.1.1. կետը լրաց., խմբ., փոփ. 10.05.01 N 02/605, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն, փոփ., լրաց. 15.04.09 N 838-Ն, լրաց. 19.04.11 N 729-Ն, լրաց., խմբ., փոփ. 20.03.12 N 79-Ն)**

4.1.2. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հիմնական միջոցի վրա կատարված ծախսերի գծով հետևյալ սկզբունքով։

ա) հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով, իսկ վարձակալի մոտ՝ վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով։

բ) հիմնական միջոցի (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերի չափով՝ ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված՝ Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների համար:

գ) հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են տվյալ ամսվա 1-ի դրությամբ այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (մնացորդային արժեքին՝ հիմնական միջոցի սկզբնական (ծեռքբերման) արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերություն՝ հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները) և այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է սույն հրահանգի 4.1.1 կետի «ե» ենթակետին համապատասխան, ընդ որում՝

- եթե կապիտալ բնույթի ծախսերը չեն գերազանցում հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը, ապա այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է ամորտիզացիոն մնացորդային ժամկետում:

- եթե կապիտալ բնույթի ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը և հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է 5 տարուց պակաս, ապա այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է մնացորդային ամորտիզացիոն ժամկետում (բայց ոչ պակաս տվյալ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից):

- եթե կապիտալ բնույթի ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը և հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է 5 տարուց ոչ պակաս, ապա այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է մնացորդային ամորտիզացիոն ժամկետում (բայց ոչ պակաս, քան 5 տարվա ընթացքում):

#### *Օրինակ 14.*

1) Հիմնական միջոցի սկզբնական (ծեռքբերման) արժեքը կազմում է 7,2 մլն դրամ, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 4,8 մլն դրամ և հաշվեկշռային (մնացորդային) արժեքը՝ 2,4 մլն դրամ (7,2-4,8): Հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 3 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետի չափով): Հիմնական միջոցի վրա կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր (2004 թ. հուլիսի 15-ին կազմված կատարողական ակտի հիման վրա) 1,8 մլն դրամի չափով:

Տվյալ դեպքում հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են այդ հիմնական միջոցի 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքին և հիմնական միջոցը ամորտիզացվում է 2004 թ. հուլիսի 1-ից հետո ընկած ամորտիզացիոն մնացորդային ժամկետում:

2004 թ. հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված ամորտիզացիան ամսական կազմում է 0,2 մլն դրամ (7,2:3:12), իսկ դրանց հանրագումարը՝ 1,2 մլն դրամ (0,2x6): 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ (մինչև կապիտալ բնույթի ծախսերի կատարումը) հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը կազմում է 1,2 մլն դրամ (2,4-1,2), իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 6 ամիս:

2004 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար ամորտիզացիան ամսական կազմելու է 0,5 մլն դրամ ((1,2+1,8):6), իսկ դրանց հանրագումարը՝ 3,0 մլն դրամ (0,5x6): Ընդամենը տարեկան ամորտիզացիան կազմում է 4,2 մլն դրամ (1,2+3,0):

Այսպիսով՝ հիմնական միջոցը լրիվ ամորտիզացվում է 3 տարում (սկզբնապես սահմանված ամորտիզացիոն (տվյալ դեպքում՝ նվազագույն) ժամկետում):

2) Հիմնական միջոցի սկզբնական (ծեռքբերման) արժեքը կազմում է 7,2 մլն դրամ, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 4,8 մլն դրամ և հաշվեկշռային (մնացորդային) արժեքը՝ 2,4 մլն դրամ (7,2-4,8): Հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 3 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետի չափով): Հիմնական միջոցի վրա կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր (2004 թ. հուլիսի 15-ին կազմված կատարողական ակտի հիման վրա) 3,3 մլն դրամի չափով:

Տվյալ դեպքում հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են այդ հիմնական միջոցի 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքին և հիմնական միջոցը ամորտիզացվում է ամորտիզացիոն նվազագույն ժամկետում:

2004 թ. հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված ամորտիզացիան ամսական կազմում է 0,2 մլն դրամ (7,2:3:12), իսկ դրանց հանրագումարը՝ 1,2 մլն դրամ (0,2x6): 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ (մինչև կապիտալ բնույթի ծախսերի կատարումը) հիմնական միջոցի հաշվեկշռային (մնացորդային) արժեքը կազմում է 1,2 մլն դրամ (2,4-1,2), իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 6 ամիս:

2004 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար ամորտիզացիան ամսական կազմելու է 0,125 մլն դրամ ((1,2+3,3):3:12), իսկ դրանց հանրագումարը՝ 0,75 մլն դրամ (0,125x6): Ընդամենը տարեկան ամորտիզացիան կազմում է 1,95 մլն դրամ (1,2+0,75):

2005-2006 թթ. համար տարեկան ամորտիզացիան կազմելու է 1,5 մլն դրամ ((1,2+3,3):3), իսկ 2007 թ. (հունվար-հունիս) համար՝ 0,75 մլն դրամ ((1,2+3,3):3:12x6):

Այսպիսով՝ հիմնական միջոցը լրիվ ամորտիզացվում է 5.5 տարում (մինչև կապիտալ բնույթի ծախսի կատարումը հաշվառված ամորտիզացիոն ժամկետի (2.5 տարի) և ամորտիզացիոն նվազագույն ժամկետի (3 տարի) հանրագումար):

Սույն օրինակում, եթե հիմնական միջոցի սկզբնական ամորտիզացիոն ժամկետը ռեզիդենտի կողմից սահմանվել էր 7 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետից ավելի), ապա 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ

(մինչև կապիտալ բնույթի ծախսերի կատարումը) ամորտիզացիոն մնացորդային ժամկետը կազմելու է 4.5 տարի (7-2.5) և հիմնական միջոցը 2004 թ. հուլիսի 1-ից հետո ամորտիզացվելու է 7 տարում (2.5+4.5):

Սույն օրինակում, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ լրիվ ամորտիզացված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կամորտիզացվեն 3 տարում (ամորտիզացիոն նվազագույն ժամկետում):

3) Հիմնական միջոցի սկզբնական (ծեռքբերման) արժեքը կազմում է 12,0 մլն դրամ, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 9,6 մլն դրամ և հաշվեկշռային արժեքը՝ 2,4 մլն դրամ (12,0-9,6): Հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 10 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետի չափով): Հիմնական միջոցի վրա կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր (2004 թ. հուլիսի 15-ին կազմված կատարողական ակտի հիման վրա) 3,6 մլն դրամի չափով:

Տվյալ դեպքում հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են այդ հիմնական միջոցի 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքին և հիմնական միջոցը ամորտիզացվում է 5 տարվա ժամկետում:

2004 թ. հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված ամորտիզացիան ամսական կազմում է 0,1 մլն դրամ (12,0:10:12), իսկ դրանց հանրագումարը՝ 0,6 մլն դրամ (0,1x6): 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ (մինչև կապիտալ բնույթի ծախսերի կատարումը) հիմնական միջոցի հաշվեկշռային (մնացորդային) արժեքը կազմում է 1,8 մլն դրամ (2,4-0,6), իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 1.5 տարի:

2004 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար ամորտիզացիան ամսական կազմելու է 0,09 մլն դրամ ((1,8+3,6):5:12), իսկ դրանց հանրագումարը՝ 0,54 մլն դրամ (0,09x6): Ընդամենը տարեկան ամորտիզացիան կազմում է 1,14 մլն դրամ (0,6+0,54):

2005-2008 թթ. համար տարեկան ամորտիզացիան կազմելու է 1,08 մլն դրամ ((1,8+3,6):5), իսկ 2009 թ. (հունվար-հունիս) համար՝ 0,54 մլն դրամ ((1,8+3,6):5:12x6):

Այսպիսով՝ հիմնական միջոցը լրիվ ամորտիզացվում է 13.5 տարում (մինչև կապիտալ բնույթի ծախսի կատարումը հաշվառված ամորտիզացիոն ժամկետի (8.5 տարի) և 5 տարվա հանրագումար):

Սույն օրինակում, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ լրիվ ամորտիզացված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կամորտիզացվեն 5 տարում:

4) Հիմնական միջոցի սկզբնական (ծեռքբերման) արժեքը կազմում է 12,0 մլն դրամ, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 2,4 մլն դրամ և հաշվեկշռային արժեքը՝ 9,6 մլն դրամ (12,0-2,4): Հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 10 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետի չափով): Հիմնական միջոցի վրա կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր (2004 թ. հուլիսի 15-ին կազմված կատարողական ակտի հիման վրա) 9,9 մլն դրամի չափով:

Տվյալ դեպքում հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են այդ հիմնական միջոցի 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքին և հիմնական միջոցը ամորտիզացվում է ամորտիզացիոն մնացորդային ժամկետում:

2004 թ. հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված ամորտիզացիան ամսական կազմում է 0,1 մլն դրամ (12,0:10:12), իսկ դրանց հանրագումարը՝ 0,6 մլն դրամ (0,1x6): 2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ (մինչև կապիտալ բնույթի ծախսերի ճանաչումը) հիմնական միջոցի հաշվեկշռային (մնացորդային) արժեքը կազմում է 9,0 մլն դրամ (9,6-0,6), իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 7,5 տարի:

2004 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար ամորտիզացիան ամսական կազմելու է 0,21 մլն դրամ ((9,0+9,9):7,5:12), իսկ դրանց հանրագումարը՝ 1,26 մլն դրամ (0,21x6): Ընդամենը տարեկան ամորտիզացիան կազմում է 1,86 մլն դրամ (0,6+1,26):

2005-2011 թթ. համար տարեկան ամորտիզացիան կազմելու է 2,52 մլն դրամ ((9,0+9,9):7,5):

Այսպիսով՝ հիմնական միջոցը լրիվ ամորտիզացվում է 10 տարում (մինչև կապիտալ բնույթի ծախսի կատարումը հաշվառված ամորտիզացիոն ժամկետի (2.5 տարի) և ամորտիզացիոն մնացորդային ժամկետի (7.5 տարի) հանրագումար, որը հավասար է սկզբնապես սահմանված ամորտիզացիոն (տվյալ դեպքում՝ նվազագույն) ժամկետին):

Սույն օրինակում, 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ լրիվ ամորտիզացված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կամորտիզացվեն 5 տարում:

դ) վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը վարձակալը ամորտիզացնում է սույն հրահանգի 4.1.1 կետի «ե» ենթակետին համապատասխան (այդ հիմնական միջոցի մնացորդային ամորտիզացիոն ժամկետում), եթե վարձակալված հիմնական միջոցի վրա այդ ծախսերի կատարման պարտականությունը նորմատիվ ակտով կամ պայմանագրով կրում է վարձակալը, ընդ որում՝ վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդը չի նվազեցվում վարձակալի համախառն եկամտից:

Այն հիմնական միջոցների (մասնավորապես՝ հողամասերի) վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը, որոնց համար ամորտիզացիոն մասհանումների կատարումը օրենսդրությամբ նախատեսված չէ, ամորտիզացվում են սույն հրահանգի 4.1.1 կետի «ե» ենթակետին համապատասխան՝ այլ հիմնական միջոցների համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից ելնելով:

Շահութահարկի հաշվարկման նպատակով հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերի տարբերակումն ըստ ընթացիկ և կապիտալ ծախսերի կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հայտանիշների և (կամ) չափերի հիման վրա:

Սույն կետի կիրառման առումով անհատույց օգտագործմամբ վերցված (ամրակցված) հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը (ընթացիկ, կապիտալ) փոխառուի մոտ հաշվի են առնվում վարձակալի համար վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) համար սահմանված կարգով,

**(4.1.2. կետը լրաց., խմբ., փոփ. 10.05.01 N 02/605, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն, 15.04.09 N 838-Ն)**

4.2. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է.

ա) բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետախուզական աշխատանքների վրա ռեզիդենտի կատարած ծախսերի չափով՝ ոչ նյութական ակտիվների համար սահմանված կարգով,

բ) գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերի չափով՝ այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում ամբողջովին (գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգումը (հասկացությունը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը):

գ) 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած՝ Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների համար, որոնց իրացումից հասույթը 2008 թվականի ընթացքում չի գերազանցել 50,0 մլն դրամը, 2008 թվականի ընթացքում ձեռք բերված ապրանքանյութական արժեքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքանյութական արժեքների մնացորդների մասով կատարված ծախսերի չափով (սույն հրահանգի 4.8 կետին համապատասխան), եթե այդ ծախսերի մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ (այդ թվում՝ միակողմանի գնման ակտ):

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերի (այսինքն՝ երբ ձեռքբերման մասով առկա է միակողմանի գնման ակտ) և դրանց մասով «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն հաշվարկված և վճարված եկամտահարկի հանրագումարի այն չափով, որը ամսական կտրվածքով չի գերազանցում 3,0 մլն դրամը, իսկ միանվագ գործարքի գծով (այդ թվում՝ եկամտահարկի գումարը)՝ 300,0 հազ. դրամը: Ընդ որում՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցման նպատակով հաշվետու տարվա ընթացքում միակողմանի փաստաթղթերով (կրճատ հաշիվ-ապրանքագիր, հսկիչ-դրամարկային մեքենայի կտրոն, միակողմանի գնման ակտ) կատարված ծախսերի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 36,0 մլն դրամը:

**(4.2 կետը փոփ. 10.05.01 N 02/605, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն, լրաց. 15.04.09 N 838-Ն, խմբ. 19.04.11 N 729-Ն, լրաց. 20.03.12 N 79-Ն)**

**4.3. Շահութահարկի հաշվարկման ժամանակ ծախս չեն համարվում՝**

4.3.1. այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները (այդ թվում՝ համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները):

4.3.2. արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման բացասական արդյունքը\*2:

4.3.3. օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման բացասական արդյունքը՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

4.3.4. ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող ոչ ռեզիդենտի անհատույց ստացված ակտիվների (այդ թվում՝ անդամավճարների) գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը:

**(4.3.4 կետը լրաց. 19.04.11 N 729-Ն)**

4.3.5. յուրաքանչյուր հարկատեսակի (այդ թվում՝ հարկերին փոխարինող վճարների), տուրքերի և պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների, տույժերի և տուգանքների մինչև 100 դրամ գերավճարների և գերավճարից տաբերվող գումարները, որոնք հարկ վճարողի լուծարման դեպքում անտեսվում են:

**(4.3.5 կետը լրաց. 19.04.11 N 729-Ն)**

4.3.6. ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերի ձեռքբերման և օտարման հետ կապված ծախսերը:

**(4.3.6 կետը լրաց. 19.04.11 N 729-Ն)**

4.4. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում, մասնավորապես, հետևյալ ծախսերը.

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը գերազանցող՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար վճարները,  
- Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գովազդի, մարքեթինգի, կադրերի պատրաստման և վերապատրաստման համար ծախսերը,  
- ներկայացուցչական, հովանավորչական և կառավարման ծառայությունների ծախսերը,  
- Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ օրապահիկի և դաշտային բավարարման համար ծախսերը,  
- հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար ծախսերը,  
- առողջապահական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, ինչպես նաև բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար ծախսերը (այդ թվում՝ ամորտիզացիոն մասհանումները և նորոգման ծախսերը)։

բ) պետական կամ համայնքների բյուջեներ, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգին կատարվող վճարումների դիմաց գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները (բացառությամբ՝ քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (տնտեսական պայմանագրերի պայմանները խախտելու) համար գանձվողների)։

գ) անհատույց տրամադրված ակտիվները, ներած պարտավորությունները (բացառությամբ՝ սույն հրահանգի 4.7.5 կետում նախատեսված դեպքերի)։

դ) միավորներին և արտագերատեսչական կառավարման այլ կառույցներին տրամադրված հատկացումները։

ե) սպասարկող տնտեսությունների պահպանման ծախսերը։

Դրանք այն արտադրություններն ու տնտեսություններն են, որոնց գործունեությունը կապված չէ տվյալ ոչ ռեզիդենտի ստեղծման նպատակը հանդիսացող արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման հետ։ Մասնավորապես, այդ ծախսերի մեջ ներառվում են տվյալ ոչ ռեզիդենտի հաշվապահական հաշվեկշռում գտնվող բնակարանային-կոմունալ տնտեսությունների (բնակելի տների, հանրակացարանների, լվացքատների, բաղնիքների շահագործման և այլն), կենցաղային սպասարկման արհեստանոցների, ճաշարանների և հանրային սննդի այլ օբյեկտների, մանկական նախադպրոցական հիմնարկների (մուր-մանկապարտեզների), ակումբների, հանգստյան տների, առողջարանների, հանգստյան գոտիների, առողջապահական, մարզական և մշակութային նշանակության այլ օբյեկտների պահպանման և շահագործման ծախսերը։

զ) ոչ ռեզիդենտի կողմից արտադրանքի արտադրության հետ չառնչվող ծառայությունների (քաղաքների կամ այլ բնակավայրերի բարեկարգման աշխատանքներ, գյուղատնտեսական աշխատանքներին օժանդակություն և այլն) մատուցման կամ դրանց դիմաց կատարվող ծախսերը։

է) այն եկամուտների (մասնավորապես՝ շահաբաժինների) ստացման հետ կապված ծախսերը, որոնք միաժամանակ նվազեցվում են համախառն եկամտից։

ը) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնակի չափը գերազանցող վարկերի և փոխառությունների տոկոսները։

Ընդ որում, բանկ և (կամ) վարկային կազմակերպություն չհամարվող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների՝ բանկ և (կամ) վարկային կազմակերպություն չհամարվող ռեզիդենտ կամ այլ ոչ ռեզիդենտ սուբյեկտներից ներգրավված փոխառությունների դիմաց հաշվետու տարում վճարման ենթակա (հաշվարկվող) տոկոսները համախառն եկամտից չեն նվազեցվում տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության զուտ ակտիվների կրկնապատիկի գումարը գերազանցող չափով, իսկ բանկ և (կամ) վարկային կազմակերպություն համարվող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների՝ բանկ և (կամ) վարկային կազմակերպություն չհամարվող ռեզիդենտ կամ այլ ոչ ռեզիդենտ սուբյեկտներից ներգրավված փոխառությունների դիմաց հաշվետու տարում վճարման ենթակա (հաշվարկվող) տոկոսները համախառն եկամտից չեն նվազեցվում տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության զուտ ակտիվների իննապատիկի գումարը գերազանցող չափով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ միջազգային զարգացման կազմակերպություններից ստացված փոխառությունների դիմաց վճարման ենթակա տոկոսների, ինչպես նաև պարտքային արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման միջոցով ներգրավված միջոցների դիմաց վճարման ենթակա տոկոսների)։

թ) օրենքով սահմանված դեպքերում շահույթի (զուտ շահույթի) հաշվին կատարված ծախսերը (մասհանումները, հատկացումները)։

ժ) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման դեպքում՝ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները։

ժբ) գործատու հանդիսացող ոչ ռեզիդենտի կողմից վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կատարված վճարումների՝ տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 5%-ը գերազանցող մասը։

Սույն կետի «ա» և «ը» պարբերություններում նշված դրույթները, բացառությամբ՝ օրապահիկի և դաշտային պայմաններում ու տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, չեն տարածվում ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված՝ Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների վրա:

(4.4 կետը լրաց. 14.03.02 N 02/354, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն, փոփ., լրաց. 15.04.09 N 838-Ն, խմբ., լրաց. 19.04.11 N 729-Ն, փոփ., լրաց. 20.03.12 N 79-Ն)

#### 4.5. Կորուստները

4.5.1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի մթերման, պահպանման և իրացման պրոցեսում բացահայտված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված չափը չգերազանցող՝ փաստաթղթերով հիմնավորված նյութական ռեսուրսների պակասորդից և փչացումներից առաջացած փաստացի կորուստի (բնական կորուստ) չափով՝ տվյալ տարվա ընթացքում:

Կորուստի նորմաները կիրառվում են միայն փաստացի պակասորդի առկայության դեպքում: Կորուստի նորմաների բացակայության դեպքում կորուստը համարվում է գերնորմատիվային պակասորդ:

Գույքի պակասորդները, ինչպես նաև բնական կորուստի նորմաներից ավելի փչացումները ձևակերպվում են մեղավոր անձանց վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված բնական կորուստի չափերը գերազանցող կորուստի դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է այդ կորուստի չափով՝

ա) վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին հատուցելու դեպքում՝ կորուստի ամբողջական կամ մաս-մաս հատուցման տարում, կամ՝

բ) վնաս պատճառած անձին չպարգելու կամ վնաս պատճառած անձից անհրաժեշտ գումարները վերականգնելու անհնարինության հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ վերջինիս ընդունման տարում, կամ՝

գ) անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու տարում:

4.5.2. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի պատահական կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ այն հայտնաբերվելու տարվա ընթացքում:

Շահութահարկով հարկման առումով որպես պատահական կորուստ է ընդունվում հարկատուի գույքի (շենքեր, շինություններ, այլ հիմնական միջոցներ, ապրանքանյութական պաշարներ և այլ նյութական արժեքներ) փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը (ոչնչացումը, վնասումը կամ որակական հատկանիշների անկումը), որը տեղի է ունենում հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների, ինչպես նաև օրենսդրության փոփոխության (գործունեության տեսակի արգելում, ազգայնացում և այլն) հետևանքով (ներառյալ տարերային աղետների հետևանքների կանխման կամ վերացման հետ կապված ծախսերը):

#### 4.6. Ծախսերի և փաստացի կորուստների բաշխում

Թույլատրվում է փաստաթղթերով հիմնավորված ծախսերի և փաստացի կորուստների բաշխում ոչ ռեզիդենտի և Հայաստանի Հանրապետությունում նրա ստորաբաժանման կամ վայրի միջև: Բաշխված ծախսերը ներառում են, մասնավորապես, կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը՝ կատարված ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

**Օրինակ 15.** Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտը ստորաբաժանման միջոցով իրականացված գործունեության գծով ստացել է հետևյալ արդյունք.

- |  |               |
|--|---------------|
| ա) հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ՝  | 9,8 մլն դրամ. |
| բ) ստորաբաժանման համար կատարված ծախսեր՝  | 2,6 մլն դրամ. |
| այդ թվում՝   |               |
| - ստորաբաժանման կողմից անմիջականորեն Հայաստանի Հանրապետությունում կատարված ծախսեր (ստորաբաժանման աշխատակազմի վարձատրությանն ուղղվող միջոցներ, հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ, գրասենյակի վարձակալության վճար, տրանսպորտային ծախսեր և այլն) | 2,1 մլն դրամ. |
| - ոչ ռեզիդենտի գլխավոր գրասենյակի կողմից բաշխված կառավարչական և ընդհանուր վարչական ծախսեր (կադրերի պատրաստում և վերապատրաստում, գործուղման ծախսեր և այլն)  | 0,3 մլն դրամ. |
| - այլ նվազեցումներ (գործարքն անվավեր ճանաչելու հետևանքով գործարքի մյուս կողմին հատուցվող (վերադարձվող) միջոցներ)   | 0,2 մլն դրամ. |

Բաշխվող ծախսերը ներառում են ոչ ռեզիդենտի կողմից իր ստորաբաժանման համար կատարված ծախսերը, որոնք անմիջականորեն չեն կատարվել այդ ստորաբաժանման կողմից:  
*(4.6 կետը լրաց. խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն)*

#### **4.7. Այլ նվազեցումները**

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

4.7.1. Գործարքն անվավեր ճանաչելու հետևանքով գործարքի մյուս կողմին հատուցվող (վերադարձվող) միջոցների գումարի չափով:

4.7.2. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով՝ պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումները գերազանցող գումարի չափով:  
*(4.7.2 կետը խմբ. 14.03.02 N 02/354)*

4.7.3. \*<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարների չափով:  
*(2-րդ պարբերությունը հանվել է 21.06.04 N 1-05/9-Ն)*  
*(4.7.3 կետը փոփ. 14.03.02 N 02/354, 21.06.04 N 1-05/9-Ն)*

4.7.4. Հաշվետու տարում հայտնաբերված՝ նախորդ երեք տարիներին ավել ցույց տրված եկամտի և (կամ) պակաս ցույց տրված նվազեցման չափով:

4.7.5. Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններում հաշվառման կանգնած ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0,25 տոկոսի չափով:  
*(4.7.5 կետը խմբ. 10.05.01 N 02/605)*

4.7.6. Ռեզիդենտ իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ հարկատուի բաժնետոմսերի (փայերի) դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և բաժնեմասի հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով:

4.7.7. Հարկատուի կողմից սեփականաշնորհման սերտիֆիկատների ձեռքբերման և սեփականաշնորհմանը մասնակցելու նպատակով ներդրման արժեքների, իսկ ինվեստիցիոն ֆոնդերում ներդրման դեպքերում՝ դրանց անվանական և ձեռքբերման (հաշվեկշռային) արժեքների տարբերության չափով:

4.7.8. Հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված սույն հրահանգի 4.1.1 կետի «բ» ենթակետում թվարկված նվազեցման (աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների) 150 տոկոսի չափով:

Սույն կետում նշված նվազեցումը կատարվում է սույն հրահանգի 4.1.1 կետի «բ» ենթակետում նշված նվազեցումից անկախ:

Սույն կետում նշված նվազեցումը իրականացնելիս, որպես վարձու աշխատող հաշմանդամներ, բացի հիմնական գործունեության մեջ ներգրավված հաստիքային աշխատող հաշմանդամներից, ներառվում են նաև համատեղության կարգով այլ ձեռնարկություններից և կազմակերպություններից աշխատանքի ընդունված հաշմանդամները և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատանքներ կատարող հաշմանդամները:

*(4.7.8 կետը փոփ. 21.06.04 N 1-05/9-Ն)*

#### **4.8. Համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումների իրականացումը**

4.8.1. Արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի (նյութական, աշխատանքի վարձատրության, պարտադիր սոցիալական ապահովության, գործատուի կողմից վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կատարված վճարումների, արտադրական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ (այդ թվում՝ երկարաժամկետ վարձակալված հիմնական միջոցների գծով), նորոգում և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան:

**(4.8.1 կետը փոփ. 15.04.09 N 838-Ն, 19.04.11 N 729-Ն)**

4.8.2. Առևտրական գործունեություն իրականացնող հարկատուների մոտ ապրանքների ձեռքբերման արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ապրանքների իրացմանը համապատասխան:

4.8.3. Սույն հրահանգի 4.8.1 և 4.8.2 կետերում չնշված ակտիվների (հիմնական միջոցների և այլ ակտիվների) մնացորդային արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ակտիվների իրացմանը համապատասխան:

4.8.4. Հարկատուի գործունեության հետ կապված վարչական ծախսերի (կառավարման ապարատի աշխատավարձ, պարտադիր սոցիալական ապահովություն, գործատուի կողմից վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կատարված վճարումներ, գործուղումներ, նյութական և տրանսպորտային սպասարկում, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորոգում, պահպանում և շահագործում, ներկայացուցչական, դատական, աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, կադրերի պատրաստում և վերապատրաստում, աշխատուժի հավաքագրման հետ կապված ծախսեր, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծառայությունների հետ կապված ծախսեր), արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի (փաթեթավորում, պահպանում, բեռնում, տեղափոխում, ուղեկցում, գովազդ, մարքեթինգ և այլն), ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի (գյուտարարական և ռացիոնալիզատորական, գիտահետազոտական, նախագծային և փորձակոնստրուկտորական աշխատանքների և այլն), գործառնական այլ ծախսերի (կոնսերվացված արտադրական հզորությունների և օբյեկտների պահպանման, կարճաժամկետ արժեթղթերի իրացման, հունքի, նյութերի իրացման հետ կապված ծախսեր և այլն) և ինվեստիցիոն ծախսերի (երկարաժամկետ ակտիվների իրացման և այլ օտարման և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (որի ընթացքում դրանք կատարվել են):

**(4.8.4 կետը փոփ. 14.03.02 N 02/354, 15.04.09 N 838-Ն, 19.04.11 N 729-Ն)**

4.8.5. Հարկատուի ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների հաշվարկված տոկոսներ, վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների ստացման հետ կապված ծախսեր, գույքի երկարաժամկետ (ֆինանսական) վարձակալության դիմաց տոկոսներ և վարձակալության հետ կապված այլ ծախսեր, արժեթղթերի թողարկման և տարածման հետ կապված ծախսեր և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (որի ընթացքում դրանք կատարվել են):

4.8.6. Սույն հրահանգի 4.8.4 և 4.8.5 կետերում նշված ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև հայաստանյան աղբյուրներից եկամուտների բացակայության դեպքում:

**(4.8.6. կետը խմբ. 15.04.09 N 838-Ն)**

## **5. Շահութահարկի դրույքաչափերը**

5.1. Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

**(5.1 կետը խմբ. 10.05.01 N 02/605)**

5.2. **(5.2 կետն ուժը կորցրել է 10.05.01 N 02/605)**

5.3. Առանձին վճարողների, նրանց խմբերի, գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ և (կամ) արտոնագրային վճարներ:

**(5.3 կետը լրաց. 21.06.04 N 1-05/9-Ն, փոփ. 15.04.09 N 838-Ն, 20.03.12 N 79-Ն)**

5.4. Շահութահարկի տարբեր դրույքաչափերով (այդ թվում՝ շահութահարկի հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով) հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատուները շահութահարկը վճարում են գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված առանձին դրույքաչափերով: Այդ նպատակով հարկատուն վարում է եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում՝ ըստ գործունեության առանձին տեսակների:



Շահութահարկի տարբեր դրույքաչափերով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող հարկատուները ըստ գործունեության առանձին տեսակների հարկվող շահույթների որոշման ժամանակ ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական ծախսերը (**օրինակ**, կառավարման ապարատի աշխատավարձ, պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորոգում, պահպանում և շահագործում, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծախսեր), որոնք ըստ գործունեության առանձին տեսակների հնարավոր չէ առանձնացնել, բաշխում են ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ գործունեության առանձին տեսակների զծով ստացված համախառն եկամուտների տեսակարար կշիռներից:

Ըստ գործունեության առանձին տեսակների համախառն եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում չվարելու դեպքում դրանց մեծությունը կարող է որոշվել «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով:

*(Պարբերությունն ուժը կորցրել է 10.05.01 N 02/605)*

*(5.4 կետը փոփ. 10.05.01 N 02/605, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն, փոփ. 15.04.09 N 838-Ն, 20.03.12 N 79-Ն)*

5.5. 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած` Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների 2008 թվականի վճարման ենթակա շահութահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված` Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների 2009 թվականի վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների 2 տոկոսից և ավելի` հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների 10 տոկոսից:

Սույն կետին համապատասխան վճարված գումարները համարվում են այդ տարիների համար շահութահարկի վերջնական գումարներ:

*(5.5. կետը լրաց. 15.04.09 N 838-Ն)*

## **6. Շահութահարկի արտոնությունները**

### **6.1. Շահութահարկի վճարումից ազատվում են.**

6.1.1. Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները (բացառությամբ արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական գործունեություն իրականացնող հարկատուների) իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

*(2-րդ պարբերությունն ուժը կորցրել է 10.05.01 N 02/605)*

Սույն հրահանգի իմաստով` գյուղատնտեսական արտադրանք է համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող`

- հացահատիկային և հացահատիկատլոռային մշակաբույսերը.
- տեխնիկական մշակաբույսերը.
- պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսեր և փակ գրունտի արտադրանքը.
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը.
- կերարտադրության այլ արտադրանքը.
- պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը.
- ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը.
- ծառերի և թփերի սածիլները.
- ծառերի և թփերի տնկիները.
- անասնաբուծության արտադրանքը.
- խոզաբուծության արտադրանքը.
- ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը.
- թռչնաբուծության արտադրանք.
- ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանք.
- եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանք.
- ճագարաբուծության, մորթատու զագանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանք.
- ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանք:

Գյուղատնտեսական արտադրանքի զծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է հիմնվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային գուտ եկամտի տվյալների վրա:

Սույն կետում նշված հարկատուների գործունեության այլ տեսակներից ստացված շահույթը ենթակա է շահութահարկով հարկման սույն հրահանգով սահմանված ընդհանուր կարգով:

### **6.1.2. (6.1.2 կետն ուժը կորցրել է 10.05.01 N 02/605)**

6.1.3. Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացված գործունեությունից՝ օրենքով սահմանված կարգով շահագործող հանդիսացող և Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի հաշվետու տարվա շահութահարկի գումարը ազատ տնտեսական գոտու շահագործում իրականացնելու ժամանակահատվածի համար նվազեցվում է 100 տոկոսով:

**(6.1.3 կետը լրաց. 20.03.12 N 79-Ն)**

### **6.2 Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգումը**

Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը կիրառվում է հետևյալ գործունեության մասով՝

ա. մինչև 2009 թվականի հունվարի 1-ն իրականացված՝ խմելու ջրի մատակարարման, կեղտաջրերի հեռացման և մաքրման գծով անմիջապես բնակչությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներին, ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին, համատիրություններին, բազմաբնակարան շենքի սպասարկում (կառավարում) իրականացնող անձանց մատուցվող ծառայությունների (գործարքների) մատուցման գծով շահութահարկի վճարման ժամկետը հետաձգվում է մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը:

բ. մինչև 2011 թվականի հունվարի 1-ը իրականացված ոռոգման ջրի մատակարարման գծով բնակչությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներին, ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին, համատիրություններին, բազմաբնակարան շենքի սպասարկում (կառավարում) իրականացնող անձանց մատուցվող ծառայությունների (գործարքների), ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական գնումների շրջանակներում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գծով շահութահարկի վճարման ժամկետը հետաձգվում է մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը:

Սույն կետում նշված գործարքների (գործառնությունների) և ծառայությունների մասով ևս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով:

Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնության շրջանակներում առաջացած դեբիտորական պարտքի ներման (կամ այլ ձևով պարտքը չպահանջելու վերաբերյալ պարտատիրոջ որոշման և (կամ) համաձայնեցման) կամ պահանջի իրավունքի զիջման (փոխանցման, այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ պարտքին համապատասխանող հետաձգված շահութահարկի գումարի մասով հարկային պարտավորությունը չի համարվում դադարեցված:

**(6.2 կետը լրաց. 10.05.01 N 02/605, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն, լրաց. 15.04.09 N 838-Ն, խմբ. 19.04.11 N 729-Ն)**

### **6.3. Հարկային արտոնությունների սահմանումը**

Շահութահարկից ազատելու և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ արտոնություններ սահմանվում են օրենքով:

Մասնավորապես՝ ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող ոչ ռեզիդենտների հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի չափով (այդ գործունեության մասով ոչ ռեզիդենտները օգտվում են հարկվող օբյեկտի նվազեցման արտոնությունից): Նշված արտոնությունը կիրառվում է նաև հարկային գործակալների միջոցով ոչ ռեզիդենտների ստացված եկամուտների նկատմամբ՝ գործունեության այդ մասով:

**(6.3 կետը լրաց. 20.03.12 N 79-Ն)**

### **6.4. Շահութահարկի արտոնություններից օգտվող ոչ ռեզիդենտների հարկման առանձնահատկությունները**

Շահութահարկի արտոնություններից օգտվող ոչ ռեզիդենտները յուրաքանչյուր արտոնության մասով վարում են եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում:

Շահութահարկի արտոնությունից (արտոնություններից) օգտվող ոչ ռեզիդենտների նկատմամբ կիրառվում են սույն հրահանգի 5.4 կետի դրույթները:

**(6.4 կետը լրաց. 21.06.04 N 1-05/9-Ն)**

## **7. Հարկային հաշվառումը**

## **7.1. Հաշվեգրման եղանակով հաշվառումը**

7.1.1. Հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով:

7.1.2. Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում հարկատուն եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է, համապատասխանաբար ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

## **7.2. Հաշվեգրման եղանակով եկամուտների հաշվառման առանձնահատկությունները**

7.2.1. Եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է անվերապահ վճարման (հատուցման) հարկատուին կամ վերջինս կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, որոնք ճանաչվել են գործարքի կամ պայմանագրի մյուս մասնակցի կողմից, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս:

7.2.2. Ապրանքների իրացումից հասույթի ճանաչման պահը մատակարարից (վաճառողից) գնորդին դրանց սեփականության իրավունքի փոխանցման պահն է, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի նախատեսվում:

7.2.3. Հարկատուի կողմից ծառայություններ մատուցելու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից:

7.2.4. Տոկոսների տեսքով եկամուտների ստացման իրավունքի ճանաչման պահի իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել, որ տոկոսների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված պարտքի (փոխատվության) պայմանագրով նախատեսված պարտքի (փոխատվության) ժամկետը լրանալու պահից: Եթե պարտքի (փոխատվության) պայմանագրով նախատեսված պարտքի (փոխատվության) ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա ըստ հաշվետու ժամանակաշրջանների եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան:

7.2.5. Գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտների ստացման իրավունքի ճանաչման պահի իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել, որ վարձավճարի տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված վարձակալական պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետը լրանալու պահից: Եթե վարձակալական պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա ըստ հաշվետու ժամանակաշրջանների եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան:

7.2.6. Շահաբաժինների տեսքով եկամուտների ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի ժողովի կողմից բաշխման մասին որոշման ընդունման օրը (բայց ոչ ուշ շահաբաժինների բաշխման օրենսդրությամբ սահմանված ժամկետները, եթե օրենսդրությամբ սահմանված են շահաբաժինների բաշխման ժամկետներ և չափեր):

***(7.2.6 կետը լրաց. 14.03.02 N 02/354)***

7.2.7. Բացառությամբ բռնագրավման, նվիրատվության կամ այլ ձևով պետությանը օտարման դեպքերի, Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարումից եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն:

***(7.2.7. կետը լրաց. 15.04.09 N 838-Ն)***

7.2.8. Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ՝ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման դեպքերի)

եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5%-ից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:

**(7.2.8. կետը լրաց. 15.04.09 N 838-Ն)**

7.2.9. Սույն հրահանգի 7.2.7 և 7.2.8 կետերի դրույթները չեն կիրառվում այն դեպքերում, երբ օտարողը, վարձատուրն կամ փոխատուրն «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն չի հանդիսանում շահութահարկ վճարող (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ) կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է:

**(7.2.9. կետը լրաց. 15.04.09 N 838-Ն)**

## **8. Հարկվող օբյեկտի որոշման առանձնահատկությունները**

8.1. Եթե ոչ ռեզիդենտի և այլ անձի միջև ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են նույնանման գործարքներում սովորաբար առկա պայմաններից, ապա ցանկացած եկամտի նկատմամբ, որը կարող էր հաշվեգրել եկամուտները վճարող անձը, բայց ստեղծված պայմանների պատճառով չի հաշվեգրել, հարկային տեսչության մարմինները կարող են իրականացնել հարկային ճշգրտում՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության սահմանված կարգով:

8.2. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կամ վայրի միջոցով իրականացված գործունեությունից առաջացած հարկվող շահույթը կարող է որոշվել երկու մեթոդով՝ ուղղակի կամ անուղղակի:

Եթե ոչ ռեզիդենտը իր գործունեությունը իրականացնում է միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս՝ վարելով առանձնացված հաշվառում, ինչը թույլ է տալիս որոշել ստորաբաժանման կամ վայրի միջոցով իրականացված գործունեությունից առաջացած հարկվող շահույթը, ապա այն հաշվարկվում է ուղղակի մեթոդով՝ հաշվի առնելով ստորաբաժանման կամ վայրի միջոցով հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից ստացվող բոլոր եկամուտների հանրագումարը և սույն հրահանգով սահմանված նվազեցումները:

Եթե ոչ ռեզիդենտն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս, չվարելով առանձնացված հաշվառում, ինչը թույլ չի տալիս որոշել ստորաբաժանման կամ վայրի միջոցով իրականացված գործունեությունից առաջացած հարկվող շահույթը, ապա այն կարող է որոշվել հաշվարկի հիման վրա անուղղակի մեթոդով՝ հարկատուի և հարկային տեսչության մարմնի միջև համաձայնեցված եղանակով, որը հիմք է ծառայում հարկվող շահույթը որոշելիս, քանի դեռ չկա դրա փոփոխման համար բավարար ծանրակշիռ պատճառ: Այսինքն, մեկ անգամ կիրառված եղանակը չպետք է փոփոխվի միայն այն պատճառով, որ հետագայում կիրառվելիք եղանակը թույլ կտա ստանալ առավել բարենպաստ արդյունքներ:

Սույն կետում նշված դեպքերում Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման կամ վայրի գործունեությունից ստացված հարկվող շահույթը կարող է որոշվել՝

8.2.1. Ոչ ռեզիդենտի համընդհանուր գործունեության հասույթում Հայաստանի Հանրապետությունում գործունեությունից ստացած ապրանքների (ծառայությունների) իրացումից ընդհանուր հասույթի տեսակարար կշռով:

**Օրինակ 16.** Ոչ ռեզիդենտն իր գործունեությունն իրականացրել է մի քանի երկրներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում՝ ստորաբաժանման միջոցով), որոնց գծով առանձնացված հաշվառում չի վարվել, և հարկվող շահույթը որոշվել է ոչ ռեզիդենտի համընդհանուր գործունեության հասույթում Հայաստանի Հանրապետությունում գործունեությունից ստացած ապրանքների (ծառայությունների) իրացումից ընդհանուր հասույթի տեսակարար կշռով (ոչ ռեզիդենտի և հարկային տեսչության մարմնի միջև համաձայնեցված եղանակով):

հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ՝	9,8 մլն դրամ
ոչ ռեզիդենտի համընդհանուր գործունեությունից հասույթ՝	49,0 մլն դրամ
տեսակարար կշիռ (9,8/49,0x100%)՝	20%
ոչ ռեզիդենտի համընդհանուր ստացված շահույթ՝	16,0 մլն դրամ
հարկվող շահույթը (16,0x20%)՝	3,2 մլն դրամ

Սույն կետի կիրառման առումով որպես ոչ ռեզիդենտի համընդհանուր գործունեության հասույթ և Հայաստանի Հանրապետությունում գործունեությունից ստացված ապրանքների (ծառայությունների) իրացումից հասույթ (այդ թվում՝ արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները) ընդունվում են հարկման նպատակով ընդունվող համապատասխան մեծությունները:

8.2.2. Ոչ ռեզիդենտի համընդհանուր ծախսերում Հայաստանի Հանրապետությունում իրականացված գործունեության հետ կապված ծախսերի տեսակարար կշռով:

**Օրինակ 17.** Ոչ ռեզիդենտը իր գործունեությունը իրականացրել է մի քանի երկրներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում՝ ստորաբաժանման միջոցով), որոնց գծով առանձնացված հաշվառում չի վարվել, և հարկվող շահույթը որոշվել է ոչ ռեզիդենտի համընդհանուր ծախսերում Հայաստանի Հանրապետությունում իրականացված գործունեության հետ կապված ծախսերի տեսակարար կշռով (ոչ ռեզիդենտի և հարկային տեսչության մարմնի միջև համաձայնեցված եղանակով)։

Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման իրականացված գործունեության հետ կապված ծախսեր՝	24,0 մլն դրամ
ոչ ռեզիդենտի համընդհանուր ծախսեր՝	160,0 մլն դրամ
տեսակարար կշիռ (24,0/160,0x100%)՝	15%
ոչ ռեզիդենտի համընդհանուր ստացված շահույթ՝	16,0 մլն դրամ
հարկվող շահույթ (16,0x15%)՝	2,4 մլն դրամ

Սույն կետի կիրառման առումով որպես ոչ ռեզիդենտի համընդհանուր ծախսեր և Հայաստանի Հանրապետությունում իրականացված գործունեության հետ կապված ծախսեր (այդ թվում՝ բաշխվող ծախսեր) ընդունվում են հարկման նպատակով ընդունվող համապատասխան մեծությունները:

8.2.3. Ոչ ռեզիդենտի համընդհանուր անձնակազմում Հայաստանի Հանրապետությունում զբաղված անձնակազմի տեսակարար կշռով:

**Օրինակ 18.** Ոչ ռեզիդենտն իր գործունեությունն իրականացրել է մի քանի երկրներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում՝ ստորաբաժանման միջոցով), որոնց գծով առանձնացված հաշվառում չի վարվել, և հարկվող շահույթը որոշվել է ոչ ռեզիդենտի համընդհանուր անձնակազմում Հայաստանի Հանրապետությունում զբաղված անձնակազմի տեսակարար կշռով (ոչ ռեզիդենտի և հարկային տեսչության մարմնի միջև համաձայնեցված եղանակով)։

Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման անձնակազմի թվաքանակը՝	22 աշխատող
ոչ ռեզիդենտի անձնակազմի համընդհանուր թվաքանակը՝	200 աշխատող
տեսակարար կշիռ (22/200x100%)՝	11%
ոչ ռեզիդենտի համընդհանուր ստացված շահույթ՝	16,0 մլն դրամ
հարկվող շահույթ (16,0x16%)՝	1,76 մլն դրամ

Սույն հրահանգի 8.2.1-8.2.3 կետերում նշված մեթոդներով հարկվող օբյեկտի որոշման ընդունման նախապատվությունը տրվում է ոչ ռեզիդենտին: Ընդ որում, նշված տեսակարար կշիռները կիրառվում են ոչ ռեզիդենտի համընդհանուր ստացված հարկվող շահույթի նկատմամբ:

Սույն կետի կիրառման առումով որպես ոչ ռեզիդենտի համընդհանուր անձնակազմ և Հայաստանի Հանրապետությունում զբաղված անձնակազմ ընդունվում են փաստացի աշխատողների (այդ թվում՝ վարձու աշխատողների) թվաքանակը:

**(8.2 կետը լրաց. 10.05.01 N 02/605, խմբ., լրաց. 21.06.04 N 1-05/9-Ն)**

8.3. Շահութահարկի հաշվարկման նպատակով, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում, հարկային տեսչության մարմինն օգտվում է նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված իրավունքից:

8.4. Հարկային տեսչության մարմինը հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած եկամուտները կարող է համարել որպես Հայաստանի Հանրապետությունում վայրի միջոցով ոչ ռեզիդենտի կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության արդյունք՝ հարկային տեսչության մարմիններին այդ ձեռնարկատիրական գործունեությունը հավաստող փաստաթղթեր ոչ ռեզիդենտի կողմից ներկայացնելու դեպքում: Ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած եկամուտները որպես Հայաստանի Հանրապետությունում վայրի միջոցով իրականացրած

ծեռնարկատիրական գործունեության արդյունք հարկային տեսչության մարմնի կողմից ճանաչման դեպքում ոչ ռեզիդենտի տվյալ վայրը (այսուհետև՝ ճանաչված վայր) հաշվառման է վերցվում այդ հարկային տեսչության մարմնում: Ոչ ռեզիդենտի վայրի ճանաչումը կատարվում է վերջինիս գտնվելու վայրի տարածքային հարկային տեսչության մարմնի կողմից:

## 9. Հարկային գործակալ

### 9.1. (9.1 կետը հանվել է 14.03.02 N 02/354)

9.2. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: Հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում (գանձում) են հետևյալ չափերով.

Եկամտի տեսակը	Շահութահարկի չափը տոկոսներով
ապահովագրական հատուցումներ, վերապահովագրական վճարներ, փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5
շահաբաժիններ, տոկոսներ*, ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ, գույքի արժեքի հավելած և այլ պասիվ եկամուտներ, ինչպես նաև այլ՝ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ	10

### (Տողը հանվել է 10.05.01 N 02/605)

Աղբյուրի մոտ շահութահարկի պահումը (գանձումը) հարկային գործակալը իրականացնում է ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից: Հարկի պահումը (գանձումը) իրականացվում է յուրաքանչյուր վճարման դեպքում: Ընդ որում՝ եթե ոչ ռեզիդենտին վճարումները կատարվում են Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելածի դիմաց, ապա վճարումներն մաս-մաս իրականացնելու դեպքում շահութահարկը պահվում (գանձվում) է այն գումարներից, որոնցից հետո առաջանում է զուտ գույքի արժեքի հավելածը:

**Օրինակ 19.** Սույն հրահանգի 2.2.1 կետում բերված օրինակ 2-ի վերջին պարբերությունում նշված դեպքում ապրանքների ապահովագրման և տեղափոխման համար ոչ ռեզիդենտներին վճարած, համապատասխանաբար, 500 և 1300 ԱՄՆ-ի դոլարը համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ և այդ եկամուտները վճարող ռեզիդենտը (հարկային գործակալը) պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 90 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարի չափով (500x5%+1300x5%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտներին ենթակա է վճարման, համապատասխանաբար, 475 (500-25) և 1235 (1300-65) ԱՄՆ-ի դոլար:

**Օրինակ 20.** Սույն հրահանգի 2.3.5 կետում բերված օրինակներում.

- օրինակ 7՝ բաժնետոմսերի վաճառքի և ձեռք բերման արժեքներից առաջացած դրական տարբերության չափով ոչ ռեզիդենտին վճարած գումարը համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ և այդ եկամուտները վճարող ռեզիդենտը (հարկային գործակալը) պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 1,05 մլն դրամ գումարի չափով (7,0x15%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 5,95 մլն դրամ (7,0-1,05).

- օրինակ 8՝ ներդրված գույքի գնահատման և ձեռք բերման արժեքներից առաջացած դրական տարբերության չափով ոչ ռեզիդենտին վճարած գումարը համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ և այդ եկամուտները վճարող ռեզիդենտը (հարկային գործակալը) պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 0,4 մլն դրամ գումարի չափով (4,0x10%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 3,6 մլն դրամ (4,0-0,4).

- օրինակ 9՝ գույքի օտարումից ստացած ամբողջ գումարի չափով ոչ ռեզիդենտին վճարած գումարը համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ և այդ եկամուտները վճարող ռեզիդենտը (հարկային գործակալը) պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 50,0 հազ. դրամ գումարի չափով (500,0x10%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 450,0 հազ. դրամ (500,0-50,0):

**Օրինակ 21.** Սույն հրահանգի 2.4.3 կետում բերված օրինակներում.

- օրինակ 12՝ ոչ ռեզիդենտի կողմից նշանակված իրացման և ավելի ձեռնադրու գների (որով միջնորդ ձեռնարկությունը փաստորեն իրականացրել է իրացման համար մատակարարված ապրանքի վաճառքը) տարբերության ստացած ամբողջ գումարը համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտ և այդ եկամուտները վճարող միջնորդ ձեռնարկությունը (հարկային գործակալը) պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 22 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարի չափով (220x10%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 25198 ԱՄՆ-ի դոլար (25000+220-22):

- օրինակ 13՝ ոչ ռեզիդենտի կողմից նշանակված իրացման և ավելի ձեռնադրու գների (որով միջնորդ ձեռնարկությունը փաստորեն իրականացրել է իրացման համար մատակարարված ապրանքի վաճառքը) տարբերության իրեն պատկանող մասը համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտ և այդ եկամուտները վճարող միջնորդ ձեռնարկությունը (հարկային գործակալը) պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 25 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարի չափով (250x10%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 25225 ԱՄՆ-ի դոլար (25000+250-25):

**Օրինակ 22.** Ռեզիդենտը այլ անձի հանձնարարությամբ ոչ ռեզիդենտին փոխանցում է 1000 ԱՄՆ-ի դոլար: Եթե հանձնարարության մեջ չի նշվում, թե ինչի դիմաց է կատարվում վճարում ոչ ռեզիդենտին, ապա եկամուտներ վճարող ռեզիդենտը (հարկային գործակալը) պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարի չափով (1000x10%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 900 ԱՄՆ-ի դոլար (1000-100):

Ոչ ռեզիդենտի՝ Համահայկական բանկից ստացված շահաբաժինները հարկվում են գրո տոկոս դրույքաչափով:

Հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից օֆշորային գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների կամ հիմնական միջոցների ձեռքբերման (այդ թվում՝ արտաքին տնտեսական գործունեության պայմանագրերի շրջանակներում) համար այդ գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններին կատարված վճարումների դիմաց արդյունքը վճարման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում չստացվելու (կամ մասնակի ստացվելու) դեպքում կատարված վճարումների (մասնակի արդյունք ստանալու դեպքում՝ հանած մարված վճարումների գումարները) նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20% դրույքաչափով: Օֆշորային գոտիների (երկրների) ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կատարված վճարումների դիմաց արդյունքը որոշելու համար կիրառելի են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 2052-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները, իսկ եկամտի վճարման օր է համարվում վճարման օրվան հաջորդող մեկ տարին լրանալու օրը (եթե այդ ժամանակահատվածում վճարման դիմաց արդյունք չի ստացվել կամ ստացվել է մասնակի): Սույն պարբերության դրույթները վերաբերում են 2012 թվականի հունվարի 1-ից հետո կատարված վճարումներին (այլ ոչ թե այն վճարումներին, որոնք կատարվել են մինչև 2012 թվականի հունվարի 1-ը, սակայն որոնց կատարումից հետո մեկ տարվա ժամկետը լրացել է 2012 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո):

*(9.2 կետը լրաց., փոփ. 10.05.01 N 02/605, լրաց. 14.03.02 N 02/354, 15.04.09 N 838-Ն, խմբ. 19.04.11 N 729-Ն, փոփ. 05.09.11 N 2061-Ն, փոփ., լրաց., 20.03.12 N 79-Ն)*

9.3. Հարկային գործակալի նշված չափերով պահած (գանձած) գումարները համարվում են Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած շահութահարկի վերջնական գումար, բացառությամբ այն դեպքի, երբ ոչ ռեզիդենտը Հայաստանի Հանրապետությունում գործունեություն է իրականացնում ստորաբաժանման կամ հարկային տեսչության մարմնի կողմից ճանաչված վայրի միջոցով, և այդ եկամուտը ստորաբաժանման կամ ճանաչված վայրի գործունեության արդյունք է:

9.4. Հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտները ստորաբաժանման գործունեության արդյունք լինելու դեպքում, ստորաբաժանումը ազատվում է աղբյուրի մոտ շահութահարկի պահումից (գանձումից), եթե ստորաբաժանումը հարկային գործակալին ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համապատասխան հարկային տեսչության մարմնում հաստատված տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության մարմիններում հաշվառված լինելու և հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ունենալու մասին (տեղեկանքի ձևը հաստատվել է ՀՀ հարկային տեսչության 1998 թ. ապրիլի 2-ի թիվ 01/22 հրամանով և ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ պետական գրանցման թիվ 439800113) և (կամ) գործարքը կատարելիս պահպանվել են ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ ներկայացվող պահանջները:

Անկախ սույն կետի առաջին մասում նշված դեպքերի հարկային գործակալի կողմից հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտին վճարվող շահաբաժինները ենթակա են հարկման եկամուտների վճարման աղբյուրի մոտ:

9.5. Բնամթերային ձևով (այդ թվում՝ փոխանակման գործարքների միջոցով) եկամուտներ վճարելու դեպքում հարկային գործակալը դրանք վերահաշվարկում է դրամով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, և սահմանված ժամկետներում շահութահարկը վճարում է բյուջե:

9.6. Սույն հրահանգի 9.2 կետի համաձայն պահված (գանձված) շահութահարկի գումարը հարկային գործակալը պարտավոր է վճարել բյուջե՝ ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

**(9.6 կետը փոփ. 14.03.02 N 02/354, 19.04.11 N 729-Ն)**

9.7. Հարկային գործակալը պարտավոր է տարին մեկ՝ հաջորդող տարվա փետրվարի 20-ից ոչ ուշ, սույն հրահանգի հավելված 1-ով սահմանված ձևով ներկայացնել ամփոփ հաշվարկ իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչության մարմնին՝ անցած տարում ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին (ամսական կտրվածքով): Ընդ որում՝ ոչ ռեզիդենտներին բացառապես սույն հրահանգի 2.2.1-րդ կետում նշված արտաքին տնտեսական գործունեությունից եկամուտներ և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության 07.10.2004թ. «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին» N 1398-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձվող հարկի դրույթաչափի նվազեցման կամ հարկումից ազատման մասին» սերտիֆիկատ-դիմումի հիման վրա առանց հարկի պահման (գանձման) եկամուտներ վճարելու դեպքում ամփոփ հաշվարկ չի ներկայացվում: Սույն մոտեցումը կիրառվում է նաև գործող միջազգային պայմանագրերի շրջանակներում հարկային գործակալների համար սահմանված՝ ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով հարկային արտոնությունների դեպքերում:

**(9.7 կետը փոփ. 14.03.02 N 02/354, խմբ. 19.04.11 N 729-Ն)**

9.8. Սույն հրահանգի դրույթների համաձայն՝ շահութահարկը աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) դեպքում հարկային պարտավորությունը (և շահութահարկը սահմանված ժամկետներում բյուջե չվճարելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը և տուգանքները) կրում է հարկային գործակալը:

**(9.8 կետը լրաց. 21.06.04 N 1-05/9-Ն)**

9.9. Եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահման (գանձման) հնարավորության բացակայության (այսինքն՝ հարկային գործակալի բացակայության) դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահութահարկի վճարման պարտավորությունը կրում է հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտը՝ սույն հրահանգի 11.2-11.6 կետերով սահմանված կարգով և ժամկետներում՝ հիմնվելով սույն հրահանգի 9.2 կետում նշված դրույթաչափերի հիման վրա:

**(9.9 կետը խմբ. 14.03.02 N 02/354, լրաց. 15.04.09 N 838-Ն)**

9.10. Հարկային գործակալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ամփոփ հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային տեսչության մարմնին ներկայացնել ճշտված հաշվարկներ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

**(9.10 կետը լրաց. 14.03.02 N 02/354)**

## **10. Ձեռնարկատիրական գործակալ**

10.1. Ձեռնարկատիրական գործակալը ոչ ռեզիդենտի հետ կնքված պայմանագրի շրջանակներում իրականացնում է առանձնացված հաշվառում:

Ձեռնարկատիրական գործակալը ոչ ռեզիդենտին (ու՜մ վայր է հանդիսանում ձեռնարկատիրական գործակալը) վճարած գումարներից շահութահարկի պահումը (գանձում) և պետական բյուջե փոխանցումը կատարում է սույն հրահանգի 9.1-9.6 կետերի համաձայն:

**Օրինակ 24.** Ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կնքված պայմանագրի համաձայն ոչ ռեզիդենտը իր կողմից պատրաստված արտադրանքը (երաշխիքային ժամկետ ունեցող ապրանքները) մատակարարում է ռեզիդենտին: Ոչ ռեզիդենտից ձեռք բերված ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման արդյունավետությունը բարձրացնելու և ոչ ռեզիդենտի արտադրված ապրանքներով նոր շուկա գրավելու նպատակով ռեզիդենտին հանձնարարվում է ապահովել.

- վաճառված ապրանքների գծով երաշխիքային նորոգում և սպասարկում՝ ըստ ոչ ռեզիդենտի ներկայացված տեխնոլոգիայով, որի համար ոչ ռեզիդենտից պարբերաբար տրամադրվում են պահեստամասեր և որոնց հաշվառումը վերահսկվում է ոչ ռեզիդենտի կողմից,

- իրացվող ապրանքների գծով հաճախորդներին կատալոգների (որտեղ գովազդվում են ոչ ռեզիդենտի արտադրանքը) անհատույց տրամադրում, որոնք պարբերաբար տրամադրվում են ոչ ռեզիդենտի կողմից:



Տվյալ դեպքում ապրանքների մատակարարման գծով ոչ ռեզիդենտի կողմից ստացված եկամուտները հանդիսանում են արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտներ և Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չեն: Վաճառված ապրանքների գծով երաշխիքային նորոգման և սպասարկման, ինչպես նաև կատալոգների անհատույց տրամադրման գծով ռեզիդենտը հանդիսանում է ոչ ռեզիդենտի ձեռնարկատիրական գործակալ և այդ գործունեության մասով վարում է առանձնացված հաշվառում (մասնավորապես, այդ գործունեությունից ստացված արդյունքը հաշվի չի առնվում ռեզիդենտի տարեկան շահութահարկի հաշվարկի մեջ):

**Օրինակ 25.** Ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կնքված պայմանագրի համաձայն ռեզիդենտը Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի անունից և վերջինիս կողմից նշանակված սակագներով մատուցում է միջազգային փոստային ծառայություններ (փոստառաքումների կազմակերպում): Այդ գործունեության գծով տարվա ընթացքում ռեզիդենտը ստացել է՝

- Հայաստանի Հանրապետության տարածքից փոստառաքումների արտահանումից՝ 30000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որից 90%-ը (27000 ԱՄՆ-ի դոլար) կազմում է ոչ ռեզիդենտի հասանելիք մասը (գումարի 10%-ը կազմում է ռեզիդենտի վարձատրությունը):

- Հայաստանի Հանրապետություն հասցեագրված փոստառաքումներից՝ 1000 ԱՄՆ-ի դոլար (ռեզիդենտի վարձատրություն, որը կազմում է ծառայության ընդհանուր արժեքի 5%-ը):

Տվյալ դեպքում ռեզիդենտը հանդիսանում է ոչ ռեզիդենտի ձեռնարկատիրական գործակալ և Հայաստանի Հանրապետության տարածքից փոստառաքումների արտահանումից ստացված եկամուտների (30000 ԱՄՆ-ի դոլար) մասով, որոնք համարվում են ոչ ռեզիդենտի համար հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, վարում է առանձնացված հաշվառում: Միաժամանակ, հանդիսանալով նաև հարկային գործակալ՝ ոչ ռեզիդենտին հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների գծով, ռեզիդենտը ոչ ռեզիդենտին վճարված այդ եկամուտներից պարտավոր է պահել (գանձել) շահութահարկ՝ 2700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարի չափով (27000x10%): Տվյալ դեպքում ոչ ռեզիդենտին ենթակա է վճարման 24300 ԱՄՆ-ի դոլար (27000-2700):

Հայաստանի Հանրապետություն հասցեագրված փոստառաքումներից ստացված եկամուտները 19000 ԱՄՆ-ի դոլարի չափով (1000/5%-1000) ոչ ռեզիդենտի համար չեն հանդիսանում հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ և Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չեն:

**(Օրինակը փոփ. 21.06.04 N 1-05/9-Ն)**

10.2. Սույն հրահանգի 10.1 կետի դրույթները չեն տարածվում ձեռնարկատիրական գործակալ հանդիսացող ֆիզիկական անձանց (բացառությամբ՝ անհատ ձեռներեցների) վրա:

10.3. Եթե ոչ ռեզիդենտը Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեությունը իրականացնում է անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած միջնորդի միջոցով, որը գործում է իր ձեռնարկատիրական գործունեության սովորական շրջանակներում, ապա վերջինս չի հանդիսանում ոչ ռեզիդենտի ձեռնարկատիրական գործակալ:

## 11. Ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվարկման, վճարման կարգն ու ժամկետները

11.1. Եթե ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցում է 2,0 մլն. դրամը, ապա ոչ ռեզիդենտը տարվա ընթացքում՝ կիսամյակը մեկ, կատարում է շահութահարկի կանխավճարների մուծումներ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ քառորդի չափով, հավասար բաժիններով, մինչև հաշվետու տարվա հուլիսի 1-ը և դեկտեմբերի 31-ը: Ոչ ռեզիդենտները նվազագույն շահութահարկի գումարներ (ամսական, տարեկան) չեն հաշվարկում և չեն վճարում:

Շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարը հաշվարկելիս հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները.

1) Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվող ոչ ռեզիդենտները, որոնք հաշվետու տարում փաստացի ստացել են նախորդ տարիներին վերաբերող՝ հետաձգված շահութահարկի գումարներին համապատասխան գումարներ (եկամուտներ), վերջիններիս գծով հաշվարկված և հետաձգված շահութահարկի գումարները վճարում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը (ներառյալ) և շահութահարկի այդ գումարները հաշվի են առնում հաշվետու տարվան հաջորդող տարվա շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարները հաշվարկելիս:

2) Շահութահարկի կիսամյակային կանխավճարների հաշվարկման ժամանակ շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարների և (կամ) արտոնագրային վճարների գումարի մեջ շահութահարկին բաժին ընկնող շահութահարկի գումարները հաշվի չեն առնվում: Այսինքն՝

ա. այն ոչ ռեզիդենտը, որը նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում հանդիսացել է շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող և (կամ) արտոնագրային վճար վճարող, իսկ ընթացիկ տարում իրականացնում է շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարով և (կամ) արտոնագրային վճարով չհարկվող գործունեություն և շահութահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով

(այսինքն՝ հարկման կարգերի փոփոխությունը կատարվում է տարվա սկզբից), ընթացիկ տարում շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարները հաշվարկվում է՝ առանց հաշվի առնելու նախորդ տարվա համար հաշվարկված հաստատագրված վճարի և (կամ) արտոնագրային վճարի գումարի մեջ շահութահարկին բաժին ընկնող (իսկ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցելու դեպքում՝ ընդհանուր սահմանված կարգով հաշվարկված շահութահարկի) գումարները:

բ. այն ոչ ռեզիդենտը, որը 1-ին կիսամյակում հանդիսացել է միայն շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող (անկախ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցելու հանգամանքից) և (կամ) արտոնագրային վճար վճարող, իսկ 2-րդ կիսամյակում իրականացնում է շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարով և (կամ) արտոնագրային վճարով չհարկվող գործունեություն և շահութահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով (այսինքն՝ հարկման կարգերի փոփոխությունը կատարվում է կիսամյակի սկզբից), 2-րդ կիսամյակի շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարները վճարում է ընդհանուր սահմանված կարգով:

գ. այն ոչ ռեզիդենտը, որը ընթացիկ կիսամյակի մի ժամանակահատվածում հանդիսացել է միայն շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող (անկախ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցելու հանգամանքից) և (կամ) արտոնագրային վճար վճարող, իսկ մյուս ժամանակահատվածից սկսած իրականացնում է շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարով և (կամ) արտոնագրային վճարով չհարկվող գործունեություն և շահութահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով (այսինքն՝ հարկման կարգերի փոփոխությունը կատարվում է կիսամյակի ընթացքում), ապա այդ կիսամյակից սկսած շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարները վճարում է ընդհանուր սահմանված կարգով:

3) Ոչ ռեզիդենտի կողմից հարկային մարմինն տարեկան եկամուտների մասին ճշտված հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու դեպքում կատարվում է նաև հաշվարկված շահութահարկի կանխավճարների կիսամյակային գումարների վերահաշվարկ՝ այն տարվանը հաջորդող տարվանից սկսած, որի համար ներկայացվել է ճշտված հաշվարկ (հայտարարագիր), ինչպես նաև վերահաշվարկված և չվճարված շահութահարկի կանխավճարների կիսամյակային գումարների նկատմամբ տույժերի վերահաշվարկ:

4) Ընթացիկ տարում ոչ ռեզիդենտի կողմից ինքնուրույն հայտնաբերված՝ նախորդ տարիներում ավելի կամ պակաս ցույց տրված եկամուտները և (կամ) նվազեցումները (որոնք բխում են հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից) շահութահարկով հարկման նպատակով հաշվի են առնվում հայտնաբերման տարվա հարկվող շահույթը որոշելիս (եթե այդ եկամուտները և (կամ) նվազեցումները վերաբերում են ընթացիկ տարվան նախորդող 3 տարիներին), եթե այդ եկամուտները և (կամ) նվազեցումները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից կատարված՝ շահութահարկի գծով բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ ընդգրկված տարիներին, և ընթացիկ, ինչպես նաև նախորդ տարիների շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների վերահաշվարկ չի կատարվում:

5) Ընթացիկ տարում շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարները հաշվարկելիս հաշվի են առնվում նախորդ տարում ստուգմամբ հայտնաբերված շահութահարկի գումարները (անկախ այն հանգամանքից, թե որ տարիներին են վերաբերում հայտնաբերված լրացուցիչ գումարները), եթե հայտնաբերված գումարները վերաբերում են այն տարիներին, որոնց համար մինչև ստուգման ակտում արձանագրումը ոչ ռեզիդենտի կողմից հարկային մարմին ներկայացված են եղել տարեկան եկամուտների մասին հաշվարկները (հայտարարագրերը):

6) Ընթացիկ տարում ստուգմամբ հայտնաբերված՝ նախորդ տարիներում ավելի կամ պակաս ցույց տրված եկամուտները և (կամ) նվազեցումները շահութահարկով հարկման նպատակով հաշվի են առնվում հայտնաբերման տարվա հարկվող շահույթը որոշելիս (եթե այդ եկամուտները և (կամ) նվազեցումները վերաբերում են ընթացիկ տարվան նախորդող 3 տարիներին) և ընթացիկ, ինչպես նաև նախորդ տարիների շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների վերահաշվարկ չի կատարվում, բացառությամբ եթե ընթացիկ տարում ստուգմամբ հայտնաբերված՝ նախորդ տարիների արդյունքներով վճարման ենթակա լրացուցիչ շահութահարկի գումարներից որևէ մեկը վերաբերում է այն հաշվետու տարվանը, որի համար մինչև ստուգման ակտում արձանագրումը ոչ ռեզիդենտի կողմից հարկային մարմին ներկայացված չի եղել տարեկան եկամուտների մասին հաշվարկը (հայտարարագիրը), ապա շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների հաշվարկը (կամ վերահաշվարկը) կատարվում է այդ տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկի (հայտարարագրի) «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներկայացման ժամկետից սկսած:

Հետագայում ոչ ռեզիդենտի կողմից այդ տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնելու դեպքում այն պետք է համապատասխանի ստուգման արդյունքներին՝ ստուգված ժամանակաշրջանի համար ստուգման արդյունքներին չհամապատասխանող տարեկան եկամուտների մասին հաշվարկի (հայտարարագրի) ներկայացումը և շահութահարկի գծով պարտավորությունների ճշտումը կարող է տեղի ունենալ միայն ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

7) Ընթացիկ տարում ստուգմամբ հայտնաբերված՝ նախորդ տարիներում պակաս վճարված (կամ չվճարված) շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների նկատմամբ հաշվարկվում են միայն տույժեր՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափերով, և հարկային օրենսդրությամբ սահմանված տուգանքները (այդ թվում՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով սահմանված տուգանքը) չեն կիրառվում:

Եթե ընթացիկ տարում՝ մինչև նախորդ տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկների «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներկայացման ժամկետը (բայց ոչ ռեզիդենտի կողմից նախորդ տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց հետո), տվյալ ոչ ռեզիդենտի մոտ կատարված ստուգմամբ հայտնաբերվել է նախորդ տարվա լրացուցիչ շահութահարկի գումարներ, ապա հաշվարկված տուգանքները ենթակա են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ստուգման ակտ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում, իսկ լրացուցիչ հայտնաբերված շահութահարկի գումարը՝ մինչև ընթացիկ տարվա ապրիլի 25-ը (ներառյալ): Այդ ժամկետից սկսվում է նախորդ տարվա հաշվարկված շահութահարկի (այդ թվում՝ լրացուցիչ հայտնաբերված) չվճարված շահութահարկի գումարների գծով տույժերի հաշվարկը՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափերով, իսկ չվճարված շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը ոչ ռեզիդենտի կողմից տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելու պահին չի դադարեցվում:

8) Սահմանված ժամկետներում ոչ ռեզիդենտի կողմից շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների մուծումներ չկատարելու դեպքում տույժերը կիրառվում են ժամանակին չմուծված շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների նկատմամբ՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափերով: Հաշվետու տարվա շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը հարկային մարմնին հաշվետու տարվա շահութահարկի գումարի հայտնի դառնալու (տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելու) օրը (բայց ոչ ուշ հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 25-ը) չի դադարեցվում, իսկ հաշվետու տարում հաշվարկված, սակայն չվճարված կանխավճարների գումարները այդ տարվա շահութահարկի գումարից ավելի լինելու դեպքում, տարեկան շահութահարկի գումարից ավելի հաշվարկված կանխավճարների գումարը առաջնային նվազեցվում է 2-րդ կիսամյակի համար հաշվարկված կանխավճարի գումարից, ապա՝ 1-ին կիսամյակի համար հաշվարկված կանխավճարի գումարից: Շահութահարկի կիսամյակային կանխավճարների գումարների նկատմամբ հաշվարկված տույժերի գումարները վերահաշվարկման կամ վերադարձման ենթակա չեն (բացառությամբ՝ սույն կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերի):

**(11.1 կետը լրաց. 21.06.04 N 1-05/9-Ն, 19.04.11 N 729-Ն, փոփ. 05.09.11 N 2061-Ն, խմբ. 20.03.12 N 79-Ն)**

11.2. Բացառությամբ սույն կետով սահմանված դեպքերի հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտը հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 15-ից ոչ ուշ հարկային տեսչության մարմիններին է ներկայացնում սույն հրահանգի հավելված 2-ով սահմանված ձևով տարեկան եկամուտների մասին հաշվարկ: Մինչև օրացուցային տարին ավարտվելը ոչ ռեզիդենտի գործունեության դադարեցման դեպքում նշված փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն գործունեության դադարեցման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

Հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտները տարեկան եկամուտների մասին հաշվարկ չեն ներկայացնում միայն այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտները հայաստանյան աղբյուրներից եկամուտներ են ստացել բացառապես արտաքին տնտեսական գործունեությունից և (կամ) ստացել են բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից հարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալների վրա:

Ոչ ռեզիդենտները հայտարարում են հաշվետու տարվա ընթացքում հայաստանյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները (այդ թվում՝ արտաքին տնտեսական գործունեությունից ստացված և սույն հրահանգի 9.9-րդ կետում նշված եկամուտները), բացառությամբ այդ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման գործունեության արդյունք չհանդիսացող այն եկամուտների, որոնցից հարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալների վրա:

Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում ունեցող ոչ ռեզիդենտները տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնում են անկախ շահութահարկի գծով արտոնություններից օգտվելու և հարկվող շահույթ չունենալու հանգամանքից, ինչպես նաև հարկվող շահույթի որոշման մեթոդներից (ուղղակի, անուղղակի):

**(11.2 կետը լրաց. 10.05.01 N 02/605, խմբ. 21.06.04 N 1-05/9-Ն, խմբ. 15.04.09 N 838-Ն, 19.04.11 N 729-Ն)**

11.3. Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվարկը կատարում է ինքնուրույն, որն արտացոլում է տարեկան եկամուտների մասին հաշվարկում՝ հաշվի առնելով սույն հրահանգի դրույթները և հիմնվելով սույն հրահանգի 5.1-րդ կետում նշված դրույթաչափի վրա: Տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման կամ հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին:

Վճարման ենթակա շահութահարկի չափը հաշվետու տարում որոշվում է որպես գործունեությունից ստացված տարեկան շահութահարկի և կիսամյակային կանխավճարների գումարի (սահմանված դեպքերում նաև՝ Հայաստանի Հանրապետությունում պահված շահութահարկի գումարների) տարբերություն:

**(11.3 կետը փոփ. 21.06.04 N 1-05/9-Ն, խմբ. 19.04.11 N 729-Ն)**

11.4. Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր ունեցող ոչ ռեզիդենտի տարեկան եկամուտների մասին հաշվարկը հարկային մարմիններին ներկայացնում են նաև՝

1) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված ոչ ռեզիդենտները, եթե հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված ու այլ եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը.

2) ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող ոչ ռեզիդենտները, եթե ստացված միջոցները բացառապես սույն հրահանգի 2.5.1-2.5.7-րդ կետերի համաձայն եկամուտ չեն համարվում.

3) բացառապես շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտները:

**(11.4 կետը խմբ. 19.04.11 N 729-Ն)**

11.5. Սույն հրահանգի 9.9-րդ կետում նշված դեպքերում Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվարկը կատարում է ինքնուրույն, որն արտացոլում է տարեկան եկամուտների մասին հաշվարկում՝ հաշվի առնելով սույն հրահանգի դրույթները և հիմնվելով սույն հրահանգի 9.2-րդ կետում նշված դրույթաչափերի վրա: Ընդ որում՝

1) ոչ ռեզիդենտի հարկվող շահույթը որոշելիս այդ եկամուտներից նվազեցումներ չեն կատարվում (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ այդ եկամուտները չեն հանդիսանում պասիվ եկամուտներ և դրանց մեծությունը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվում է ոչ ռեզիդենտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված ծախսերից ելնելով).

2) տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացվում է այն հարկային տեսչության մարմին, որտեղ հաշվառված է կենտրոնական գանձապետարանը (մինչև 01.01.2011թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող տարեկան եկամուտների մասին հայտարարագրերը ներկայացվում են այն հարկային տեսչության մարմին, որտեղ հաշվառված է տվյալ եկամտի աղբյուրը):

**(11.5 կետը խմբ. 19.04.11 N 729-Ն)**

11.6. Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա հարկային տեսչության մարմինը տալիս է համապատասխան տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին (տեղեկանքի ձևը հաստատված է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանքի ձևը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 03-Ն հրամանով):

**(11.6 կետը խմբ. 15.04.09 N 838-Ն)**

11.7. Հարկային տեսչության մարմիններն իրավունք ունեն ստուգել Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման կամ վայրի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտների ֆինանսական, հաշվապահական և հարկային գործերը և ստուգել հարկային գործակալի կողմից շահութահարկը պահելու և այն բյուջե վճարելու ճշտությունը:

11.8. **(11.8 կետն ուժը կորցրել է 19.04.11 N 729-Ն)**

11.9. **(11.8 կետն ուժը կորցրել է 19.04.11 N 729-Ն)**

## **11.1. Շահութահարկի պարտավորությունների հաշվառումը**

11.1.1. Ոչ ռեզիդենտի շահութահարկի և շահութահարկի կանխավճարների գումարները, հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտներից պահվող շահութահարկի գումարները, շահութահարկի գծով հաշվարկված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ոչ ռեզիդենտի և հարկային գործակալի կողմից այդ գումարների վճարումները հարկային մարմինների կողմից հաշվառվում են հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում:

Շահութահարկի պարտավորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև շահութահարկի պարտավորություններից ավելի վճարված գումարները անձնական հաշվի քարտում հաշվառվում են դրամով (առանց լուծաների): Հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հաշվարկներում, ամփոփ հաշվարկներում և այլ փաստաթղթերում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից տրվող տեղեկանքներում և այլ փաստաթղթերում շահութահարկի պարտավորությունների և հաշվանցվող գումարների հաշվառման համար որպես չափման միավոր ընդունվում է դրամը (առանց լուծաների): Ոչ ռեզիդենտի կամ հարկային գործակալի լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում շահութահարկի մինչև 100 դրամ ընդհանուր պարտավորությունները և գերավճարներն անտեսվում են:

Շահութահարկի պարտավորությունները անձնական հաշվի քարտում հաշվառվում են «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով (այսինքն՝ տվյալ շահութահարկի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ անկախ տարեկան եկամուտների մասին հաշվարկների կամ ամփոփ հաշվարկների ներկայացման ամսաթվից: Նշվածը

վերաբերում է նաև տարեկան եկամուտների մասին ճշտված հաշվարկներով կամ ամփոփ հաշվարկներով առաջացող շահութահարկի պարտավորություններին:

11.1.2. Որևէ հաշվետու ժամանակաշրջան (տարի) սկսվում է տվյալ հաշվետու տարվա հունվարի 1-ից (նոր ստեղծված ոչ ռեզիդենտների կամ հարկային գործակալների համար՝ պետական գրանցման (հաշվառման) պահից) և ավարտվում է տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ով: Հարկային մարմին տարեկան եկամուտների մասին հաշվարկները կամ ամփոփ հաշվարկները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (բացառությամբ՝ ոչ ռեզիդենտի կամ հարկային գործակալի լուծարման (գործունեության դադարեցման) դեպքերի): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանի տարեկան եկամուտների մասին հաշվարկների կամ ամփոփ հաշվարկների ներկայացման համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը (վերջնաժամկետը) և դրանից հետո ներկայացված մեկից ավելի տարեկան եկամուտների մասին հաշվարկներ կամ ամփոփ հաշվարկներ ներկայացված լինելու դեպքում առաջինը ներկայացված տարեկան եկամուտների մասին հաշվարկը կամ ամփոփ հաշվարկը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հաշվարկ, իսկ մյուսները՝ ճշտված հաշվարկներ:

Մինչև օրացուցային տարին ավարտվելը ոչ ռեզիդենտի կամ հարկային գործակալի լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում հարկային մարմին ներկայացվող հաշվարկները (հաշվետվությունները) համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ (հաշվետվություններ) և դրանից հետո այդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող հաշվարկները (հաշվետվությունները) համարվում են ճշտված հաշվարկներ (հաշվետվություններ):

11.1.3. Հաշվարկված շահութահարկի պարտավորության գումարները և հաշվանցվող գումարները չեն կարող փոփոխվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է 3 տարի՝ այդ ժամկետը լրանալուց հետո շահութահարկի պարտավորության գումարները կամ հաշվանցվող գումարները փոփոխող տարեկան եկամուտների մասին հաշվարկներ (հայտարարագրեր) կամ ամփոփ հաշվարկներ չեն կարող ներկայացվել (այսինքն՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկներ (հայտարարագրեր) կամ ամփոփ հաշվարկներ չեն ներկայացվում):

Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում շահութահարկի գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող 3 տարի հետո (նշված վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե հարկ վճարողի, դրա պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ շահութահարկի գծով պարտավորությունների հաշվարկման հարկային մարմնի փորձը ձախողվել է՝ ձախողման փաստը հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2010թ. «Հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից հարկ վճարողի, հարկ վճարողի պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման հարկային մարմինների ձախողման փաստն արձանագրելու կարգը սահմանելու մասին» N 972-Ն որոշմամբ սահմանված կարգով արձանագրելու պահից, և կասեցման հիմքերի դադարումից հետո վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, եթե հարկային մարմինը կամ դրա համապատասխան պաշտոնատար անձը գիտեր կամ կարող էր իմանալ կասեցման հիմքերի դադարման մասին): Հաշվարկված շահութահարկի պարտավորության գումարները ստուգմամբ չեն կարող նվազեցվել, իսկ հաշվանցվող գումարները չեն կարող ավելացվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է 3 տարի:

11.1.4. Ոչ ռեզիդենտի կամ հարկային գործակալի շահութահարկի պարտավորությունների դիմաց հաշվանցումը, շահութահարկի գերավճարի հաշվին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ այլ պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձը իրականացվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և այդ օրենքի 1-ին հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

*(Բաժինը լրաց. 19.04.11 N 729-Ն)*

## **12. Հարկատուների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը**

12.1. Շահութահարկի գումարները ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու, հարկային օրենսդրության մյուս պահանջները կատարելու պատասխանատվությունը կրում են հարկատուները և դրանց պաշտոնատար անձինք:

12.2. Շահութահարկի գումարները ճիշտ չհաշվարկելու, ժամանակին չվճարելու, հայտարարագրերը հարկային տեսչության մարմիններին ժամանակին չներկայացնելու (կամ ընդհանրապես չներկայացնելու), հաշվապահական հաշվետվությունները և հայտարարագրերը սխալ կազմելու, հարկվող շահույթը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու և հարկային օրենսդրության մյուս պահանջները խախտելու համար հարկատուները և դրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

12.3. *(12.3 կետը լրաց. 14.03.02 N 02/354, ուժը կորցրել է 21.06.04 N 1-05/9-Ն)*

### 13. Հարկային տեսչության պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկումը հարկատուների կողմից

Հարկային տեսչության պաշտոնատար անձանց գործողությունները հարկատուների կողմից գանգատարկվում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

### 14. Միջազգային պայմանագրերի կիրառումը

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված, վավերացված և ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն հրահանգում, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

\*1 Մինչև 1998 թ. հունվարի 1-ը գործող օրենսդրությանը համաձայն՝ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում՝

- հայցային վաղեմության ժամկետը լրացած կրեդիտորական պարտքերի գումարները,

- նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի մարման գումարը, իսկ դուրս չգրված պարտքի մարման դեպքում՝ սահմանված կարգով կատարված մասհանումների գումարը:

\*2 Անկախ սույն հրահանգի 2.5.2 և 4.3.2 կետերի դրույթներից, հարկատուի 1998 թվականի հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում ռուսական ռուբլու և ռուսական ռուբլով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատումների արդյունքները:

\*3 Մինչև 1998 թ. օգոստոսի 1-ը գործող օրենսդրությանը համաձայն՝ հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար ստորև բերված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից՝

- շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար՝ 20 տարի
- հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների շենքերի և շինությունների համար՝ 10 տարի
- հաշվողական և համակարգչային տեխնիկայի, հոսքային գծերի, ռեբոտատեխնիկայի համար՝ 3 տարի
- այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար՝ 5 տարի:

\*4 Մինչև 1999 թ. հունվարի 1-ը գործող օրենսդրությանը համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հիմնական միջոցների վրա կատարված նորոգման, արդիականացման և այլ ծախսերի չափով, բայց ոչ ավելի այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի տասը տոկոսից, որի վրա այդ ծախսերը կատարվել են: Նշված չափից ավել կատարված նորոգման, արդիականացման և այլ նմանատիպ ծախսերը (որոնք չեն նվազեցվում համախառն եկամտից) ավելացվում են տվյալ հիմնական միջոցի նախորդ տարվա վերջի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են) և այդ ծախսերը կատարվելուն հաջորդող ամսվանից սկսած ամորտիզացվում են սույն հրահանգի 4.1.4 կետի «ա» ենթակետում նշված կարգով:

Նոր մուտքագրված հիմնական միջոցների վրա մուտքագրման տարում կատարված նորոգման, արդիականացման և այլ նմանատիպ ծախսերի համախառն եկամտից չնվազեցվող մասը ավելացվում է այդ հիմնական միջոցների մուտքագրման պահի հաշվեկշռային արժեքին, որի վրա կատարվել են (կապիտալացվում են) և մուտքագրմանը հաջորդող ամսվանից սկսած ամորտիզացվում են սույն հրահանգի 4.1.4 կետի «ա» ենթակետում նշված կարգով:

Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված նորոգման, արդիականացման և այլ ծախսերի գծով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ հիմնական միջոցների վարձակալության պայմանագրում նշված արժեքի տասը տոկոսից ոչ ավելի չափով: Նորոգման և արդիականացման այն ծախսերը, որոնք սույն կետի համաձայն չեն նվազեցվում համախառն եկամտից, ամորտիզացվում են սույն հրահանգի 4.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերում նշված կարգով:

Վարձակալական պայմանագրի լուծարման և փաստացի դադարեցման դեպքում հիմնական միջոցների նորոգման, արդիականացման և այլ նմանատիպ ծախսերի վերը նշված կարգով չամորտիզացված մնացորդն ամբողջովին նվազեցվում է վարձակալի համախառն եկամտից:

\*5 Մինչև 1999 թ. հունվարի 1-ը գործող օրենսդրությանը համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է նախկինում հայցային վաղեմության ժամկետը լրացած կրեդիտորական պարտքերի մարման գումարների չափով: Նախկինում հայցային վաղեմության ժամկետը լրացած և հարկատուի համախառն եկամտի մեջ մտցված կրեդիտորական պարտքերը առնվազն հինգ տարի հաշվառվում են վերջինիս մոտ, հնարավորության դեպքում պարտատիրոջը վերադարձնելու նպատակով:



007											
008											
009											
010											
011											

[10] սյունակում նշվում է եկամտի տեսակը (կողը). 001՝ ապահովագրական հատուցումները, 002՝ վերաապահովագրական վճարները, 003՝ փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտները, 004՝ շահաբաժինները, 005՝ տոկոսները, 006՝ ռոյալթիները, 007՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտները, 008՝ գույքի արժեքի հավելաձևը, 009՝ այլ եկամուտները (բացառությամբ՝ արտաքին տնտեսական գործունեությունից եկամուտների), 010՝ օֆշորային գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների կամ հիմնական միջոցների ձեռքբերման համար այդ գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններին կատարված վճարումների դիմաց արդյունքը վճարման օրվան հաջորդող 1 տարվա ընթացքում չստացվելու (կամ մասնակի ստացվելու) դեպքում կատարված վճարումների գումարները (մասնակի արդյունք ստանալու դեպքում՝ հանած մարված վճարումների գումարները), 011՝ ընդամենը (որպես 001-010 կողերին համապատասխանող տողերի հանրագումար)

[11] սյունակներում նշվում են փաստացի վճարված եկամուտների հաշվարկային մեծությունները՝ ըստ եկամտի տեսակների

[12] սյունակներում նշվում են [11] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) հարկի գումարները՝ ըստ եկամտի տեսակների

Ամփոփ հաշվարկում չեն ներառվում ոչ ռեզիդենտներին «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ արտաքին տնտեսական գործունեությունից վճարված եկամուտները, ինչպես նաև ՀՀ կառավարության 07.10.2004թ. «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին» N 1398-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձվող հարկի դրույթաչափի նվազեցման կամ հարկումից ազատման մասին» սերտիֆիկատ-դիմումի հիման վրա առանց հարկի պահման (գանձման) վճարված եկամուտները:

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր)	_____	_____
	(ստորագրություն)	(անուն, ազգանուն)
Գլխ. հաշվապահ	_____	_____
	(ստորագրություն)	(անուն, ազգանուն)

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում, ամփոփ հաշվարկը լրացվում է 2 օրինակից:  
 Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկային գործակալին:

**(Հավելվածը լրաց. 14.03.02 N 02/354, խմբ. 19.04.11 N 729-Ն, լրաց., փոփ. 20.03.12 N 79-Ն)**

Հավելված 2

ՀԱՇՎԱՐԿ Ոչ ռեզիդենտի տարեկան եկամուտների մասին	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)										
1. Հայաստանյան աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի լրիվ անվանումը	2. Ոչ ռեզիդենտի գրանցման (ինկորպորացիայի) երկիրը										
3. Ոչ ռեզիդենտի հասցեն գրանցման (ինկորպորացիայի) երկրում	4. Ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հասցեն Հայաստանում										
5. ՀՎՀՀ <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr> </table>											6. Հեռախոսի համարը
7. Հաշվետու տարի	8. Հաշվարկի ներկայացման ամսաթիվը										
9. Ոչ ռեզիդենտի ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի հարկվող շահույթի որոշման եղանակը (0, 1, 2 կամ 3)											
<table border="1" style="display: inline-table; margin-left: auto;"> <tr> <td>Չափման միավոր</td> <td>Դրամ</td> </tr> </table>		Չափման միավոր	Դրամ								
Չափման միավոր	Դրամ										



Ցուցանիշները	Տողը	Գումարը
<b>1. Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները</b>		
<b>1.1. Ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները</b>		
ա) ապրանքների իրացումից ստացված եկամուտները	0101	
բ) արտադրանքի իրացումից ստացված եկամուտները	0102	
գ) ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները	0103	
դ) միջնորդական գործունեությունից ստացված եկամուտները	0104	
ե) կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, որոնք ներառվում են ստորաբաժանման ծախսերում	0105	
զ) հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս (ավելի) ցույց տրված եկամուտները (նվազեցումները)	0106	
է) ՀՀ տարածքում ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրված կամ (վերա)մշակված ապրանքներից (արտադրանքից) ստացված եկամուտները	0107	
ը) ստորաբաժանման միջոցով ստացված այլ եկամուտները	0108	
<i>Ընդամենը ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները (0101-ից 0108 տողերի հանրագումարը)</i>	<i>0110</i>	
<b>1.2. Ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները</b>		
<b>ա) պասիվ եկամուտները</b>		
- շահաբաժինները	0111	
- տոկոսները	0112	
- ռոյալթիները	0113	
- Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը(վարձավճարները)	0114	
- Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաձև	0115	
- այլ պասիվ եկամուտները	0116	
<i>Ընդամենը պասիվ եկամուտները (0111-ից 0116 տողերի հանրագումարը)</i>	<i>0120</i>	
<b>բ) այլ եկամուտները</b>		
- կառավարման ծառայությունների դիմաց ստացված եկամուտները	0121	
- ոչ ռեզիդենտի գլխավոր գրասենյակի կողմից իր ստորաբաժանման օգտին տրամադրված ծառայությունների դիմաց ստացված եկամուտները	0122	
- բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտները	0123	
- ապահովագրական հատուցումները	0124	
- ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական վճարները	0125	
- վերաապահովագրական վճարները	0126	
- միջնորդության պայմաններով ապրանքները օտարերկրյա պետություններից ներկրելու և Հայաստանում իրացնելու դիմաց ստացված եկամուտները	0127	
- հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտները	0128	
<i>Ընդամենը այլ եկամուտները (0121-ից 0128 տողերի հանրագումարը)</i>	<i>0130</i>	
<b>գ) արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները</b>		
<i>Ընդամենը արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները</i>	<i>0140</i>	
<b>Ընդամենը հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները՝ եկամուտների հանրագումարը (տող0110+տող0120+տող0130+տող 0140)</b>	<i>0100</i>	
- այդ թվում՝		
<i>հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով</i>	<i>0100Ը</i>	
<i>- արտոնագրային վճարով հարկվող գործունեության մասով</i>	<i>0100Բ</i>	
<b>2. Համախառն եկամտից նվազեցումները</b>		
<b>2.1. Ստորաբաժանման միջոցով կատարված ծախսերը</b>		
ա) իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված	0201	( )

ծախսերը		
բ) իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը	0202	( )
գ) իրացված ծառայությունների (այդ թվում՝ միջնորդական գործունեության) հետ անմիջականորեն կապված ծախսերը	0203	( )
դ) այլ ուղղակի ծախսերը	0204	( )
<i>Ընդամենը ստորաբաժանման միջոցով կատարված ուղղակի ծախսերը (0201-ից 0204 տողերի հանրագումարը)</i>	0205	( )
ա) գործունեության հետ կապված վարչական ծախսերը	0206	( )
բ) ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների իրացման հետ կապված ծախսերը	0207	( )
գ) ոչ արտադրական այլ ծախսերը	0208	( )
դ) ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը	0209	( )
<i>Ընդամենը ստորաբաժանման միջոցով կատարված ժամանակաշրջանի ծախսերը (0206-ից 0209 տողերի հանրագումարը)</i>	0210	( )
<i>Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ստորաբաժանման ծախսերը (տող0205+տող0210)</i>	0220	( )
<b>2.2. Ստորաբաժանման միջոցով կրած կորուստները</b>		
ա) պատահական կորուստները	0221	( )
բ) բնական կորուստները	0222	( )
գ) փաստացի այլ կորուստները	0223	( )
դ) բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող կորուստները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 2-րդ մաս)	0224	( )
<i>Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ստորաբաժանման կորուստները (0221-ից 0224 տողերի հանրագումարը)</i>	0225	( )
<b>2.3. Ստորաբաժանման այլ նվազեցումները</b>		
ա) հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում ավելի (պակաս) ցույց տրված եկամուտը (նվազեցումը)	0226	( )
բ) բարեգործական հատկացումները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, «ա» կետ)	0227	( )
գ) վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը	0228	( )
դ) այլ նվազեցումները	0229	( )
<i>Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ստորաբաժանման այլ նվազեցումները (0226-ից 0229 տողերի հանրագումարը)</i>	0230	( )
<i>Ընդամենը համախառն եկամտից ստորաբաժանման նվազեցումները (տող0220+տող0225+տող0230)</i>	0240	( )
<b>2.4. Ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար՝</b>		
ա) կատարված ծախսերը (այդ թվում՝ բաշխված ծախսերը)	0241	( )
բ) կրած կորուստները (այդ թվում՝ բաշխված կորուստները)	0242	( )
<i>Ընդամենը ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կատարված ծախսերը և կրած կորուստները (տող0241+տող0242)</i>	0245	( )
<b>2.5. Ոչ ռեզիդենտի կողմից կատարված այլ ծախսերը՝</b>		
<i>Ընդամենը ոչ ռեզիդենտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված այլ ծախսերը</i>	0250	( )
<i>Ընդամենը ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից նվազեցումները (տող0240+տող0245+տող0250)</i>	0200	( )
- այդ թվում՝		
հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0200Լ	( )
- արտոնագրային վճարով հարկվող գործունեության մասով	0200Բ	( )
<b>3. Հարկվող շահույթը (հարկային վնասը)՝ հաշվի առած ստուգման արդյունքները ((տող0100–տող0100Ա–տող0100Բ)+(տող0200–տող0200Ա–տող0200Բ), եթե 9-րդ մասում 0 է</b>	0300	

<b>4. Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները</b>				
ա) արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները	0401	( )		
բ) հարկվող շահույթի նվազեցման այլ արտոնությունները	0402	( )		
<i>Ընդամենը հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0401+տող0402)</i>	<i>0400</i>	<i>( )</i>		
<i>5. Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0300+տող0400)</i>	<i>0500</i>			
<i>6. Հաշվետու տարվա շահութահարկի գումարը</i>	<i>0600</i>			
<i>- այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարը</i>	<i>0600Ա</i>			
<b>7. Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները</b>				
Նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարը	0701	( )		
Հաշվետու տարվան վերաբերող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը	0702	( )		
Հաշվետու տարում ստացված՝ նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարները	0703			
<i>Շահութահարկի գումարը՝ հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը (տող0600+տող0702+տող0703)</i>	<i>0700</i>			
<i>Հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը (տող0701+տող0702+տող0703)</i>	<i>0700Ա</i>	<i>( )</i>		
<i>8. Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները</i>	<i>0800</i>	<i>( )</i>		
<i>9. Շահութահարկի գումարը՝ արտոնությունները կիրառելուց հետո (տող0700+տող0800)</i>	<i>0900</i>			
<i>10. Հաշվետու տարվա ընթացքում հարկային գործակալների կողմից պահված (գանձված) և տարեկան շահութահարկից հաշվանցվող գումարները</i>	<i>1000</i>	<i>( )</i>		
<b>11. Հաշվետու տարվա արդյունքներով շահութահարկի գումարը, որը՝</b>				
ա) գերազանցում է հարկային գործակալների կողմից պահված (գանձված) շահութահարկի գումարները ((տող0900+տող1000)>0)	1101			
բ) ենթակա է հաշվանցման կամ վերադարձման ոչ ռեզիդենտին ((տող0900+տող1000)<0)	1102	( )		
<b>12. Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների կիսամյակային գումարը</b>				
Շահութահարկի կանխավճարների կիսամյակային գումարի հաշվարկման բազա	1201			
Հաջորդ տարվա շահութահարկի կիսամյակային կանխավճարներին վերաբերող արտոնության գումարը	1202	( )		
Հաջորդ տարվա կանխավճարների կիսամյակային գումարը ((տող1201:4+տող1202), եթե տող0900>2000000, կամ 0)	<b>1200</b>			

Տնօրեն (ազգանուն, անուն և ստորագրություն)

Հարկ վճարողի կնիքը

Հաշվապահ (ազգանուն, անուն և ստորագրություն)

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում, հայտարարությունը լրացվում է 2 օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է կազմակերպությանը:

**Աղյուսակ 1. Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների**

Գործունեության տեսակը (կողը)				Տեսակարար կշիռը (%)
բաժին	հատված	խումբ	դաս	

(Սիյուսակը լրաց. 05.09.11 N 2061-Ն)

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

### Ոչ ռեզիդենտի տարեկան եկամուտների մասին հաշվարկի լրացման

Տարեկան եկամուտների մասին հաշվարկում (այսուհետ՝ Հաշվարկ) նշվում են. «Փաստաթղթի համարը» մասում՝ հարկային մարմնում հարկ վճարողի (ոչ ռեզիդենտ կազմակերպության) առկա անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, «Հայաստանյան աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի լրիվ անվանումը» մասում՝ հայաստանյան աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի լրիվ անվանումը, «Ոչ ռեզիդենտի գրանցման (ինկորպորացիայի) երկիրը» մասում՝ այն պետությունը, որի օրենսդրությամբ ոչ ռեզիդենտը ստեղծվել է, գրանցվել է (ինկորպորացվել), «Ոչ ռեզիդենտի հասցեն գրանցման (ինկորպորացիայի) երկրում» մասում՝ ոչ ռեզիդենտի հասցեն գրանցման (ինկորպորացիայի) երկրում, «Ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հասցեն Հայաստանում» մասում՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հասցեն Հայաստանի Հանրապետությունում և «ՀՀՀՀ» մասում՝ ոչ ռեզիդենտի (ստորաբաժանման) հարկ վճարողի հաշվառման համարը (եթե ոչ ռեզիդենտը Հայաստանում չունի առանձնացված ստորաբաժանում, ապա այս դաշտերը չեն լրացվում), «Հեռախոսի համարը» մասում՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ղեկավարի կամ ոչ ռեզիդենտի լիազորված անձի հեռախոսի համարը, «Հաշվետու տարի» մասում՝ այն տարին, որի համար լրացվում է Հաշվարկը, «Ներկայացման ամսաթիվը» մասում՝ ոչ ռեզիդենտի կողմից հարկային մարմին Հաշվարկ ներկայացնելու ամսաթիվը:

«Ոչ ռեզիդենտի ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի հարկվող շահույթի որոշման եղանակը (0, 1, 2 կամ 3)» մասում նշվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածին համապատասխան ոչ ռեզիդենտի կողմից հարկվող շահույթի որոշման եղանակը (0՝ ուղղակի եղանակը, 1՝ իրացումից հասույթի հիման վրա կիրառված անուղղակի եղանակը, 2՝ ծախսերի հիման վրա կիրառված անուղղակի եղանակը, 3՝ անձնակազմի հիման վրա կիրառված անուղղակի եղանակը), ընդ որում՝ անուղղակի եղանակներով հարկվող շահույթի որոշման դեպքում Հաշվարկի 1-ին և 2-րդ բաժինները (Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները և Համախառն եկամտից նվազեցումները) ու 0401 և 1000 տողերը (Արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները և Հաշվետու տարվա ընթացքում հարկային գործակալների կողմից պահված (զանձված) և տարեկան շահութահարկից հաշվանցվող գումարները) չեն լրացվում:

Հաշվարկում թվային տվյալները լրացվում են դրամներով՝ առանց լումաների, իսկ շահութահարկի հաշվարկին մասնակցող հանվող գումարները (բացասական մեծությունները) ցույց են տրվում փակագծերի մեջ: Հաշվարկի վերջին էջի համապատասխան մասը ստորագրվում է ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ղեկավարի (կամ ոչ ռեզիդենտի լիազորված անձի) կողմից, և Հաշվարկը կնքվում է ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կնիքով (առկայության դեպքում):

**1. Հաշվարկի 1-ին բաժնում («Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները»)** ցույց են տրվում հաշվետու ժամանակաշրջանում հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացված եկամուտները՝ Օրենքի 7-րդ, 24-րդ, 42-րդ, 43-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան: Այս բաժնում չեն ներառվում Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն եկամուտ չհամարվող տարրերը:

**1)** Հաշվարկի 1.1-րդ ենթաբաժնում («Ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները») ցույց են տրվում հայաստանյան աղբյուրներից անմիջականորեն ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից ստացված եկամուտները: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0101 տող՝ ապրանքների իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթ): 0102 տող՝ արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթ): 0103 տող՝ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթ): 0104 տող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված միջնորդական գործունեությունից ստացված եկամուտները (իրացումից հասույթ): 0105 տող՝ կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, որոնք ներառվում են ստորաբաժանման ծախսերում: 0106 տող՝ հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս ցույց տված եկամուտները կամ ավելի ցույց տված նվազեցումները: 0107 տող՝ ՀՀ տարածքում ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրված կամ (վերա)մշակված ապրանքներից (արտադրանքից) ստացված եկամուտները: 0108 տող՝ ստորաբաժանման միջոցով ստացված այլ եկամուտները: 0110 տող՝ ստորաբաժանման միջոցով հայաստանյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները՝ որպես 0101-ից 0108 տողերի հանրագումար:

**2)** Հաշվարկի 1.2-րդ ենթաբաժնում («Ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները») ցույց են տրվում հայաստանյան աղբյուրներից անմիջականորեն ոչ ռեզիդենտի կողմից ստացված եկամուտները (պասիվ եկամուտներ, այլ եկամուտներ, արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտներ): Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0111 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված շահաբաժինները: 0112 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված տոկոսները: 0113 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված ռոյալթիները: 0114 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված վարձավճարները: 0115 տող՝ Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ոչ ստորաբաժանման միջոցով ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելածը: 0116 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված այլ պասիվ եկամուտները: 0120 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված բոլոր պասիվ եկամուտները՝ որպես 0111-ից 0116 տողերի հանրագումար:

0121 տող՝ կառավարման ծառայությունների դիմաց ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները: 0122 տող՝ ոչ ռեզիդենտի գլխավոր գրասենյակի կողմից իր ստորաբաժանման օգտին տրամադրված ծառայությունների դիմաց ստացված եկամուտները: 0123 տող՝ բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները: 0124 տող՝ ապահովագրական հատուցումները: 0125 տող՝ ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական վճարները: 0126 տող՝ վերաապահովագրական վճարները: 0127 տող՝ միջնորդության պայմաններով ապրանքները օտարերկրյա պետություններից ներկրելու և Հայաստանում իրացնելու դիմաց ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները: 0128 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտները: 0130 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտների ընդհանուր գումարը՝ որպես 0121-ից 0128 տողերի հանրագումար:

0140 տող՝ ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները:

3) Հաշվարկի 0100, 100Ա և 0100Բ տողերում լրացվում են.

0100 տող՝ հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած բոլոր եկամուտները՝ որպես 0110, 0120, 0130 և 0140 տողերի հանրագումար (այդ տողում ներառվում են «Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով և արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու տարում ստացվող եկամուտները), 0100Ա տող՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները, 0100Բ տող՝ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները:

2. Հաշվարկի 2-րդ բաժնում («Համախառն եկամտից նվազեցումները») ցույց են տրվում հաշվետու տարում ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտներից կատարված՝ Օրենքի 9-րդ և 56-րդ հոդվածներում թվարկված նվազեցումները (ծախսեր (այդ թվում՝ բաշխված ծախսեր), կորուստներ (այդ թվում՝ բաշխված կորուստներ), այլ նվազեցումներ):

1) Հաշվարկի 2.1-րդ ենթաբաժնում («Ստորաբաժանման միջոցով կատարված ծախսերը») ցույց են տրվում հաշվետու տարում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից անմիջականորեն կատարված՝ հայաստանյան աղբյուրներից ստորաբաժանման միջոցով անմիջականորեն ստացված եկամուտներից նվազեցվող ծախսերը՝ Օրենքի 10-րդ, 12-17-րդ, 19-րդ, 32-րդ, 42-րդ և 56-րդ հոդվածներին համապատասխան: Այս ենթաբաժնում չեն ներառվում Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ծախս չհամարվող տարրերը և 16-րդ հոդվածի համաձայն համախառն եկամտից չնվազեցվող ծախսերը: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0201 տող՝ իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված ծախսերը (ապրանքների իրացման համապատասխան): 0202 տող՝ իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը (արտադրանքի իրացման համապատասխան): 0203 տող՝ մատուցված ծառայություններից, միջնորդական գործունեությունից ստացված եկամուտների հետ անմիջականորեն կապված ծախսերը (ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության իրացման համապատասխան): 0204 տող՝ այլ ուղղակի ծախսեր, 0205 տող՝ իրացված ապրանքների, արտադրանքի և այլ ակտիվների, մատուցված ծառայությունների, միջնորդական գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերը (ուղղակի ծախսերը)՝ որպես 0201-ից 0204 տողերի հանրագումար:

0206 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման գործունեության հետ կապված վարչական ծախսերը: 0207 տող՝ ապրանքների, արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների, միջնորդության իրացման հետ կապված ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ծախսերը: 0208 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից կատարված ոչ արտադրական այլ ծախսերը: 0209 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը: 0210 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից կատարված վարչական, իրացման և ոչ արտադրական այլ ծախսերը, ինչպես նաև ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (ժամանակաշրջանի ծախսերը)՝ որպես 0206-ից 0209 տողերի հանրագումար:

0220 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից կատարված ուղղակի և ժամանակաշրջանի ծախսերը՝ որպես 0205 և 0210 տողերի հանրագումար:

2) Հաշվարկի 2.2-րդ ենթաբաժնում («Ստորաբաժանման միջոցով կրած կորուստները») ցույց են տրվում հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից ստացված եկամուտներից նվազեցվող (փաստաթղթերով հիմնավորված) փաստացի կորուստները՝ Օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0221 տող՝ գույքի պատահական կորուստները: 0222 տող՝ գույքի բնական կորուստները (<< կառավարության 29.04.1999թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորուստի) չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման համաձայն բնական կորուստի չափերը հաստատում են նախարարությունները՝ համաձայնեցնելով վերադաս հարկային մարմնի հետ): 0223 տող՝ գույքի փաստացի այլ կորուստները (փաստացի այլ կորուստների չափերը սահմանում է << կառավարությունը): 0224 տող՝ գույքի բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող (այդ թվում՝ այդպիսի չափեր սահմանված չլինելու դեպքում) կորուստները (վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին կառուցելու դեպքում, վնաս պատճառած անձին չպարզելու հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում, անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում): 0225 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման գույքի փաստացի կորուստները՝ որպես 0221-ից 0224 տողերի հանրագումար:

3) Հաշվարկի 2.3-րդ ենթաբաժնում («Ստորաբաժանման այլ նվազեցումները») ցույց են տրվում հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտներից նվազեցվող այլ նվազեցումները՝ Օրենքի 18-րդ, 20-րդ, 23-րդ, 27-29-րդ և 32-րդ հոդվածներին համապատասխան: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում:

0226 տող՝ հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ հաշվետու տարվան նախորդող 3 տարիներում ավելի ցույց տված եկամուտները կամ պակաս ցույց տված նվազեցումները: 0227 տող՝ ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցները, նրանց մատուցված ծառայությունների արժեքը (հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների 0.25%-ի սահմաններում): 0228 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումում վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների 150%-ը՝ Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն: 0229 տող՝ հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտներից նվազեցվող այլ նվազեցումները: 0230 տող՝ հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտներից նվազեցվող այլ նվազեցումների ընդհանուր գումարը՝ որպես 0226-ից 0229 տողերի (բացառությամբ՝ 0226Ա տողի) հանրագումար:

4) Հաշվարկի 0240 տողում լրացվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից անմիջականորեն կատարված նվազեցումները՝ որպես 0220, 0225 և 0230 տողերի հանրագումար:

5) Հաշվարկի 2.4-րդ ենթաբաժնում («Ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար») ցույց են տրվում ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կատարված ծախսերը և կրած կորուստները (այդ թվում՝ բաշխված ծախսերը և բաշխված կորուստները)՝ Օրենքի 56-րդ հոդվածին համապատասխան: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում:

0241 տող՝ ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կատարված ծախսերը (այդ թվում՝ բաշխված ծախսերը): 0242 տող՝ ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կրած կորուստները (այդ թվում՝ բաշխված կորուստները): 0245 տող՝ ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար կատարված ծախսերի և կրած կորուստների (այդ թվում՝ բաշխված ծախսերի և բաշխված կորուստների) ընդհանուր գումարը՝ որպես 0241-ից 0242 տողերի հանրագումար:

6) Հաշվարկի 2.5-րդ ենթաբաժնում («Ոչ ռեզիդենտի կողմից կատարված այլ ծախսերը») և 0250 տողում ցույց են տրվում ոչ ռեզիդենտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված այն ծախսերը, որոնք վերաբերում են Օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում հարկային գործակալ չհանդիսացողներից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներին, եթե այդ եկամուտները չեն հանդիսանում պասիվ եկամուտներ և դրանց մեծությունը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվում է ոչ ռեզիդենտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված ծախսերից ելնելով:

7) Հաշվարկի 0200, 0200Ա և 0200Բ տողերում լրացվում են:  
0200 տող՝ հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտներից կատարված նվազեցումների ընդհանուր գումարը՝ որպես 0240, 0245 և 0250 տողերի հանրագումար (այդ տողում ներառվում են «Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» << օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով և արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու տարում կատարված նվազեցումները): 0200Ա տող՝ «Հաստատագրված վճարների մասին» << օրենքով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով կատարված նվազեցումները: 0200Բ տող՝ «Արտոնագրային վճարների մասին» << օրենքով սահմանված՝ արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով կատարված նվազեցումները:

3. Հաշվարկի 3-րդ բաժնում («Հարկվող շահույթը (հարկային վնասը)») և 0300 տողում ցույց են տրվում ոչ ռեզիդենտի հաշվետու տարում շահութահարկով հարկվող գործունեությունից ստացված հարկվող շահույթը (համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունը) կամ հարկային վնասը (համախառն եկամտի և նվազեցումների բացասական տարբերությունը)՝

1) ուղղակի եղանակով հարկվող շահույթի որոշման դեպքում՝ որպես 0100, 0100Ա և 0100Բ տողերի տարբերության ու 0200, 0200Ա և 0200Բ տողերի տարբերության հանրագումար:

2) Օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին համապատասխան անուղղակի եղանակով հարկվող շահույթի որոշման դեպքում՝ իրացումից հասույթի, ծախսերի կամ անձնակազմի հիման վրա հաշվարկված հարկվող շահույթը:

4. **Հաշվարկի 4-րդ բաժնում («Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները»)** ցույց են տրվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնության գումարները: Այս բաժինը լրացվում է նաև օրենքով սահմանված շահութահարկի ազատման արտոնությունների դեպքում: Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում:

0401 տող՝ արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտների գումարը՝ Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: 0402 տող՝ հարկվող շահույթի նվազեցման այլ արտոնությունների գումարը: 0400 *տող*՝ հարկվող շահույթի նվազեցման արտոնությունների գումարը՝ որպես 0401-ից 0402 տողերի հանրագումար:

5. **Հաշվարկի 5-րդ բաժնում («Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները»)** և *0500 տողում* ցույց է տրվում հաշվետու տարվա հարկվող շահույթը (հաշվի առած օրենքով սահմանված հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնությունները)՝ որպես 0300 և 0400 տողերի հանրագումար, կամ հարկային վնասը՝ 0300 տողում նշված գումարի չափով:

6. **Հաշվարկի 6-րդ բաժնում («Հաշվետու տարվա շահութահարկի գումարը»)** ցույց են տրվում հաշվետու տարվա հաշվարկված շահութահարկի գումարը (*տող 0600*)՝ ներառելով նաև հաշվետու տարում ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարները (*տող 0600Ա*): Ընդ որում՝ Օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերում ոչ ռեզիդենտի շահութահարկը որոշելիս հարկվող շահույթի (որը համապատասխանում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներին) նկատմամբ կիրառվում են նույն հոդվածի 1-ին մասով սահմանված չափերը (տոկոսներով):

7. **Հաշվարկի 7-րդ բաժնում («Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները»)** ցույց են տրվում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունների (այդ թվում՝ Օրենքի 401-րդ հոդվածով սահմանված) գումարները: Համապատասխան տողերում լրացվում են:

0701 տող՝ նախորդ տարիներում հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ չեն ստացվել: 0702 տող՝ հաշվետու տարում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվելու դեպքում՝ հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռևս չեն ստացվել: 0703 տող՝ հաշվետու տարում ստացված գումարներին համապատասխան շահութահարկի գումարները, որոնք վերաբերում են նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարներին: 0700 *տող*՝ հաշվետու տարվա շահութահարկի գումարը (հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը)՝ որպես 0600, 0702 և 0703 տողերի հանրագումար: 0700Ա *տող*՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը՝ որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռևս չեն ստացվել՝ որպես 0701, 0702 և 0703 տողերի հանրագումար:

8. **Հաշվարկի 8-րդ բաժնում («Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները»)** և 0800 տողում ցույց են տրվում շահութահարկի նվազեցման արտոնությունների գումարները, որոնք նվազեցվում են հաշվետու տարվա շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 տողից):

9. **Հաշվարկի 9-րդ բաժնում («Շահութահարկի գումար՝ արտոնությունները կիրառելուց հետո»)** և *0900 տողում* ցույց են տրվում շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց հետո՝ որպես 0700 և 0800 տողերի հանրագումար (եթե [տող0700]+[տող0800]<0, ապա =0):

10. **Հաշվարկի 10-րդ բաժնում («Հաշվետու տարվա ընթացքում հարկային գործակալների կողմից պահված (զանձված) և տարեկան շահութահարկից հաշվանցվող գումարները»)** և *1000 տողում* ցույց են տրվում հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկային գործակալների կողմից ոչ ռեզիդենտին եկամուտներ վճարելիս եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (զանձված) շահութահարկի գումարները, որոնք չեն հանդիսանում ոչ ռեզիդենտի շահութահարկի վերջնական գումար և ենթակա են հաշվանցման ոչ ռեզիդենտի հաշվետու տարվա շահութահարկից (մասնավորապես՝ Օրենքի 58-րդ հոդվածով սահմանված դեպքերում):

11. **Հաշվարկի 11-րդ բաժնում («Հաշվետու տարվա արդյունքներով շահութահարկի գումարը, որը»)** ցույց են տրվում Հայաստանում ստորաբաժանման միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտի հաշվետու տարվա արդյունքներով շահութահարկի գումարի և հարկային գործակալների կողմից պահված (զանձված) շահութահարկի գումարների տարբերությունը, ընդ որում՝ եթե 0900 և 1000 տողերի հանրագումարը դրական է, ապա լրացվում է 1101 տողը, իսկ եթե 0900 և 1000 տողերի հանրագումարը բացասական է, ապա լրացվում է 1102 տողը:

12. **Հաշվարկի 12-րդ բաժնում («Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների կիսամյակային գումարը»)** ցույց են տրվում հաշվետու տարվան հաջորդող տարվա համար հաշվարկված շահութահարկի կանխավճարների կիսամյակային գումարները՝ Օրենքի 59-րդ հոդվածին համապատասխան: Ընդ որում՝ հաշվետու տարվան հաջորդող տարում շահութահարկի նվազեցման արտոնությունից օգտվող ոչ

ռեգիդենտները կանխավճարի մեծությունը պակասեցնում են այդ (հաշվետու տարվանը հաջորդող) տարվա շահութահարկի նվազեցման չափով (տոկոսով)՝ արտոնությունից օգտվելու ժամանակաշրջանում:  
Համապատասխան տողերում լրացվում են.

1201 տող՝ շահութահարկի գումարը՝ օրենքով սահմանված արտոնությունները կիրառելուց հետո (համապատասխանում է 0900 տողին): Ընդ որում՝ այն ոչ ռեգիդենտները, որոնք հաշվետու տարում հանդիսացել են բացառապես շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար և (կամ) արտոնագրային վճար վճարող կամ որոնց հաշվետու տարվա փաստացի շահութահարկը չի գերազանցել 2,0 մլն դրամը (տող 1201 < 2000000 կամ տող 1201 = 2000000), այդ տողը չեն լրացնում: 1200 տող՝ հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների կիսամյակային գումարը՝ որպես 1201 տողի գումարի 1/4-ի և 1202 տողի հանրագումար: Ընդ որում՝ այն ոչ ռեգիդենտները, որոնք հաշվետու տարում հանդիսացել են բացառապես շահութահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող կամ որոնց հաշվետու տարվա փաստացի շահութահարկը չի գերազանցել 2,0 մլն դրամը (տող 1201 < 2000000 կամ տող 1201 = 2000000), այդ տողը չեն լրացնում:

**13.** Աղյուսակ 1-ում նշվում են հաշվետու տարում ոչ ռեգիդենտի ըստ գործունեության տեսակների ստացված եկամուտների տեսակարար կշիռները (տոկոսով) համախառն եկամտի մեջ (ըստ տեսակարար կշիռների նվազման), ընդ որում՝ «Գործունեության տեսակը (կոդը)» սյունակում գործունեության տեսակները (կոդերը) նշվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» N 372-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին համապատասխան (օրինակ՝ C2591 կոդը /բաժին C, հատված 25, խումբ 25.9, դաս 25.91/ համապատասխանում է «Մետաղական տակառների և համանման այլ տարողությունների արտադրություն» գործունեության տեսակին»), իսկ «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ: Աղյուսակ 1-ում նշված տեղեկությունները օգտագործվում են վիճակագրության նպատակով և չեն կարող հիմք հանդիսանալ շահութահարկի հաշվարկման (վերահաշվարկման) համար:

*(Հավելվածը լրաց. 19.04.11 N 729-Ն, փոփ., խմբ., լրաց. 05.09.11 N 2061-Ն, լրաց., խմբ. 20.03.12 N 79-Ն)*

**Գրանցված է**

Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից

12 ապրիլի 1999 թ.

Պետական գրանցման թիվ 43990050